


9605

Ն. Կ. ԿՐՈՒԹՍԿԱՅԱ



ԼԵՆԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

02
4-89



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.

02
4-89

22 MAY 2009

Ե. Կ. ԿՐՈՒԹՍԿԱՅԱ

Ի՞Չ Ե ԳՐԵԼ ՅԵՎ ԱՍԵԼ
ԼԵՆԻՆԸ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թարգմանեց
Ա. ՌՀԱՆՅԱՆ

9605

ՅԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Այժմ, յերբ Լուսժողկոմատին կից ըստ տեղծված և գրադարանային գործի հատուկ վարչություն, առանձնապես անհրաժեշտ ե սույն գրքությունի վերահատարակությունը. նա պետք է լինի յուրաքանչյուր գրադարանային աշխատողի ձեռքում։ Առաջին հրատարակությունը լույս տեսավ 100.000 տիրաժով, յերկրորդը՝ 30.000, բայց գնելու համար արդեն վոչ մի տեղ այդ գիրքը չես գտնի։

2-րդ հրատարակության համեմատությամբ ավելացված է յերկու նոր նյութ, վորոնք զետեղված են «Անինյան Ժողովածու»-ի XXI հատորում։ Դրանք են՝ 1) 1917թ. նոյեմբերին Պետրոգրադի Հանրային գրադարանին ուղղած նամակը և 2) մայ 1918թ. Հունիսի 7-ի վորոշումը գրադարանային գործի գրլածքի մասին. ավելացված է նույնպես 1933 թ. Հոկտեմբերի 6-ի «Պրավդա»-յի № 276-ում տպված «Սոցիալիստական չինարարության կարևոր բնագավառը» վերնագրով հոդվածը։

Այժմ, յերբ մեր յերկիրը հիմնականում



1630

39

գրադետ եղարձել, յերբ մասսաների ձգտումը դեպի դիտություններն այնքան հսկայական են, վոր վոչ մի տեսակի դպրոցներ ի վեճակի չեն սպասարկելու սովորել ցանկացող հասակավորներին, և ինքնակրթության հարցերը մղվում են առաջին պլանը, — գրադարանների միջոցով՝ ազգաբնակությանն անհրաժեշտ գրքեր առաջ մղելու գործը մասսաների մեջ ստանում ե առանձին նշանակություն:

Այս ինչու կուսակցությունը պահանջում է, վոր տվյալ գործը դրվի անհրաժեշտ բարձրության վրա: Լենինի մատնանշած ուղղությամբ պետք ե համառ ու շատ աշխատել՝ այդ գործն այնպես կանոնավորելու, վոր գրադարանները հարկավոր դրքով վորքան կարելի յել լավ սպասարկեն ազգաբնակության ամենալայն շերտերին: Գրադարանային գործի վրա պետք ե ուշադրություն դա նեն կուսակցական ու խորհրդային բոլոր որդանները. գրադարանների կառուցման ու գրադարանային աշխատանքը կանոնավորելու գործում անհրաժեշտ ե ներդրավել ազգաբնակության ամենալայն շերտերին: Վոչ մի քան այնքան չի կարող ողնել դրան, ինչքան ծանոթությունն այն բոլորին, ինչ այդ առթիվ լենինն ե տսել:

Ն. Կրուպսկայա

Հոկտեմբերի, 1933 թ.

4

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Սույն գրքույկի հին հրատարակությունը, վորը լույս ե տեսել 1929 թվին նախ՝ 50.000 և աղա 100.000 որինակով—սպառվել է: Տվյալ հրատարակությունն ավելի լրիվ է: Լենինի՝ իր հարազատներին ուղղած նախակներից հաջողվեց տալ այն բանի պատկերը, թե լենինի աշխատանքներում ինչպիսի՝ վեր ե խաղացել գրադարաններից ովտվելու գործը, թե ինչպես հմտորեն ու համառորեն նա կազմակերպել ե այդ ովտափորձումը ծանրագույն պայմաններում (բանտում, աքսորում): Կարպինսկու հիշողությունների հատվածը լրացնում ե այդ պատկերը. 1917 թ. իմ կցագրումը (որոշում) լենինի նամակներին՝ ցույց ե տալիս, վոր մեր գրքերը կարդալուց հետո կամ բոլորովին նվիրում ելինք գրադարանին, կամ ուղարկում այնտեղ ժամանակավոր ովտափորձման համար: Հետաքրքիր ե նաև Վլադիմիր Իլյիչի նամակը Գորկու կնոջը—Մ. Ֆ. Անդրեյեվային, Մոսկվայի գեղարվեստական թատրոնի հայտնի արտիստին, վորտեղ նա խնդրում ե Գորկուն կուլինի գրադարանին գրքերով ու հրատարակու-

5

թյուններով ողնելու մասին կոչ գրել, և մանրամասն գրում ե, թե ինչի մասին պետք է տուել այդ իրոշում ու ինչպես պետք է տարածել այն:

Այն պատկերը, թե ինչպիսի գեր են խաղացել գրադարանները Լենինի աշխատանքներում, ավելի պարզ ու ուելիք ե գարձնում այն, թե ինչպիսի՝ ուշադրությամբ ու հոգատարությամբ եր վերաբերվում նա գրադարանային գործի կազմակերպմանը մեղնում—նորհուրդների յերկրում:

Գրադարանային գործի դրվածքը նա համարում եր յերկրի կուլտուրական մակարդակի ցուցանիշներից մեկը։ Առաջին հրատարակության նյութերը մենք լրացրինք արտադրական պրոպագանդի մասին Լենինի թեղիսների քաղվածքով և նրա կազմած մի շարք փաստաթղթերով։ Մենք բերում ենք ֆողովը գական կոմիսարների Խորհրդի 1919 թ. հունվարի 14-ի վորոշումը, վորտեղ լուսժողկոմատին «նորից իցույց եղրվում» նրա անբարար հոգատարությունը գրադարանային գործի կանոնավոր կազմակերպման համար ու պահանջվում ե նախ՝ յեռանդագին միջոցներ ձեռնարկել գրադարանային գործի կենտրոնացման համար, և յերկրորդ՝ ամերիկական-չվեցարական սիստեմ մտցնել։

Յերկու չարաթ հետո — 1919 թ. հունվարի 30-ին նոր հիշեցում ու պահանջ՝ ներ-

կայացնել գրադարանների ու ընթերցարանների ցանցի ուղղել տարածման աճի մասին ամեն ամույս տեղակադրեր։ Ժողկոմի տորհի այդ յերկու վորոշումներն առանձնապես բնեղում նուշադրությունը 1919 թ. փետրվարին Արտադպրոցական բաժնի գրադարանային համձնաժողովներ գրած Լենինի նամակի վրա։ Այդ նամակում նա գրում է գրադարանային գործում սոցմբցում մտցնելու անհրաժեշտության մասին։ Հիմա, յերբ սոցմբցումն այդպիսի՝ գեր ե խաղում յերկրի կյանքում, Լենինի այդ նամակին առանձին հետաքրքրություն և ստանում։

Ներկա հրատարակության մեջ մենք վերատպում ենք նաև 1920 թ. նոյեմբերի 3-ի գեկրետը գրադարանային գործի կենտրոնացման մասին, իսկ նրա հետ նաև մի փաստաթուղթ, վորը մեծ հետաքրքրություն ե ներկայացնելու գրադարանային գործի կենտրոնացման հարցի մասին Լենինի ունեցած հայցքների պարզաբանման տեսակետից։ Իլլիչի ցուցումով զեկրետի նախագիծը գրել եմ յես, ընդվորում յես ջանացել եմ մեղմորեն ձեւակերպել այն տեղերը, վորոնք վերաբերում են շփման միջերատեսչական կետերին։ Իլլիչն այդ բոլոր տեղերն ուղղում ե, կետեր է զնում «ե»-երի վրա։ «Լուսժողկոմատի կոմունիստ աշխատողներին» կենտրոմի դիլեկտիվներում Լենինը խօսում է գրադարանների

մատակարարման գործի արմատական վերահառուցման մասին:

Առանձին հետաքրքրություն ե ներկայացնում Լենինի 1921 թ. մայիսի 17-ի նամակը Կիտկենսին, վորը ցույց ե տալիս, թե գըրադարանների մատակարարման գործին ինչպիսի' լրջագույն նշանակություն ե տվել վաղիմիք Իլյիչը: «Հարկավոր ե, — գրում ե այդ նամակում Իլյիչը, — վոր դուք (և մենք) բացարակ ճշությամբ խմանանք՝ ում նըստեցնենք (և՝ «Յենտրոպեչատ»-ից և գրադարանային ցանցից անպայման յերկու հիմնարկություններից), յեթե խորհրդային յուրաքանչյուր դիրք լույս տեսնելուց մի ամիս (յերկու շաբաթ, վեց շաբաթ հետո) յուրաքանչյուր գրադարանում» չկա («Լեն. Ժող.», XX, եջ 312):

Յեվ, վերջապես, Համկ(ր)Կ Կենտկոմի 1921 թ. նոյեմբերի 16-ի շրջաբերականն ընդունմ ե գրադարաններում վճար մտցնելու անթույլատրելիությունը:

Տաս տարի յե անցել այն ժամանակից, յերբ Իլյիչն արդեն չի կարող այլևս հոգաւ գրադարանային գործի գրվածքի մասին:

Իլյիչի պատգամներն անգրագիտության վերացման գործում կատարվում են: Վերջին տարիներում այդ գործի մեջ են ներգրավվել ամենալայն մասսաները: Ժողովուրդը մեզ մոտ գրագետ ե դառնում, բայց գրքի կոլեկ-

տիվ ոգտագործման, գրադարանների ցանցի աճման, յուրաքանչյուր նոր դուրս յեկող գըրգով գրանց մատակարարելու նկատմամբ՝ գործը շատ ավելի վատ է:

Պետք ե ե՛ այդ բնագավառում կատարել իլյիչի պատգամները նույնալիսի համառությամբ, վորպիսի համառությամբ մենք կատարում ենք այդ պատգամներն անգրագիտության վերացման բնագավառում:

Ն. Կրուպսկայա
14 հունվարի, 1932 թ.

ԼԵՆԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Լենինը շատ մեծ ժամանակ եր անցկացնում գրադարաններում։ Յերբ նա Սամարայում եր ապրում, չափաղանց շատ գրքեր եր վերցնում գրադարաններից։ Յերբ յեկավ Պետեր, որերով նստում եր Հանրային գրադարանում։ Նա գրքեր եր վերցնում նաև «Վոլոնեկոնոմիչեսկի» ընկերության և մի շարք այլ գրադարաններից։ Մինչև իսկ բանտում նըստած ժամանակ քույրը նրա համար գրադարանից գրքեր եր տանում։ Նա քաղվածքներ եր անում այդ գրքերից։ Լենինի յերկերի յերկրորդ հրատարակության III հատորում հավաստված ե, վոր նա յուր «կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գիրքը գրելու համար հարկադրված ե յեղել ոգտվելու 583 գրքից։ «կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքի մեջ վկայություններ կան այդ գրքերի մասին։ Կարո՞ղ եր Լենինն իր համար գնել այդ բոլոր գրքերը։ Նրանցից շատերը նույնիսկ վաճառքի չեյին հանդում, որինակ՝ Լենինի համար հատկապես արժեքավոր գեմատվային վիճակադրական ժողովածուները։ Սակայն, բացի գրանից, Լենինն

այն ժամանակ ապրում եր վորպես ուսանող, մի փոքրիկ սենյակում և իր վրա գոռշներ եր ծախում: Նա հնարավորություն չուներ այդքան փող ծախսելու — հազարից վոչ պակաս այդ գրքերը գնելու համար, նա ժամանակ չուներ բոլոր գրախանութները վազելու, վորպեսզի այդ գրքերը գտնի, կարդալու ժամանակ ել չեր մնա, առանց գրադարանային կատալոգի նա նույնիսկ չեր ել իմանա այդ գրքերից շատերի գոյության մասին: Յեկ վերջապես նա տեղ չուներ պահելու այդ գրքերը: Կարդալով այդ գրքերը՝ նա վո՞չ միայն կարողացավ գրել մի այնպիսի մեծ ու կարեոր գիրք, ինչպիսին ե «կապիտալիզմի զարգացումը», այլև միաժամանակ հիանալի կերպով ուսումնասիրեց այն ժամանակվա բանվորների ու գյուղացիների կյանքը: Իսկ առանց այդ բանի՝ նրանից չեր կարող դուրս գալ այն լենինը, վորին մենք բոլորս գիտենք: «Կապիտալիզմի զարգացումը Բուսաստանում» գիրքը հրատարակվեց 1899 թվին:

Արտասահման ընկնելով՝ Վլադիմիր Իլյիչն ավելի յեռանդագին սկսեց ոգտվել գրադարաններից: Նա ոտար լեզուներ գիտեր և այդ լեզուներով շատ գրքեր կարդաց: Նա յերբեք չեր կարող գնել այդ գրքերը, վորով՝ հետեւ եմիգրացիայի մեջ ստիպված եր հաշվել յուրաքանչյուր կոպեկը, անտեսել այն

արամվայի, ուտեսալի և այլ բաների համար: Բայց գիրք չկարդալով, արտասահմանյան թերթերն ու ժուռնալները չկարդալով, Իլյիթը չեր կարող կատարել այն աշխատանքը, վորը նա կատարում եր, չեր ունենա այն գիտելիքները, վորոնցով նա այնքան հիանալի գինված եր:

Յերբ կարդում ենք նրա «Նամակներ հարազաներին», յերկում ե, թե նա ինչպիսի նշանակություն եր տալիս գրադարաններին:

1895 թվին նա առաջին անգամ գնում է արտասահման: բազմաթիվ նոր տպավորություններ. յերկու շաբաթ ալբում և բեռլինում, դիտում ե բանվորների կյանքը և միաժամանակ ոլարապում բեռլինի կայսերական գրադարանում: 1896 թվին բանտ ե ընկնում և յերեք շաբաթ հետո արգեն կազմակերպում ե գրադարանային գրքերից ոգտվելու գործը: Նա ոգտվում ե վո՞չ միայն բանտի գրադարանի գրքերից, նա հոգ ե տանում, վոր բանտում նստած՝ ոգտվի գրսի գրադարաններից: Բանտարկվելուց յերեք շաբաթ հետո Վլադիմիր Իլյիչը գրում ե իր հարացատներին.

«...Գրական պարապմունքներ կալանավորներին թույլատրվում են. յես գիտմամբ այդ մասին տեղեկացա գատախազից, թեպետ և առաջուց ել գիտեյի: (Այդ թույլատրիում ե նույնիսկ բանտում գտնվող կալանավորներին): Հենց նա հաստատեց, վոր բաց թողնը»

վոր գրքերի քանակությունը չի սահ Էտնա-
փակվում։ Հետո, թույլատրվում է գրքերը
վերադարձնել, — հետեւապես կարելի յե ողող-
վել գրադարաններից։ Այդ տեսակետից, ու-
րեմն, դործերը լավ են։

Ենհամեմատ ավելի լուրջ են մյուս խո-
չընդունվ ըը — գրքեր ճարելու տեսակետից։
Դաս գրքեր են պետք. յես ստորև կցում եմ
այն գրքերի ցուցակը, վորոնք անհրաժեշտ են
խճացնեմ, — այնպես վոր նրանք ճարելը բո-
վական գլւացավանք կվատաճառի։ Նույնիսկ
չգիտեմ, արդյոք հՀաջողվի՞ ճարել բոլորը։
Համանաբար կարելի յե հույս զնել. «Վորո-
եկոնոմիչեսկի» ընկերության գրադարանի
վրա (այնտեղից յես արդեն գրքեր եմ վերց-
քել ու գրավ թողել 16 ս.), վորը գրտվով
գրքեր և բաց թողնում տուն տանելու՝ յերկու
ամիս ժամանակով, բայց այդ գրադարանը
շատ թերի յե։ Այ, յեթե Հնարավոր լիներ
ոգամիելու (վորեւ գրողի կամ պրոֆեսորի մի-
ջնոցի) Համալսարանի և Փինանսների մինիս-
տրության գիտական կոմիտեյի գրադարան-
նից, այն ժամանակ արդեն գրքեր հարելու
հարցը կարելի յե լուծված համարել։

Վերջին և ամենից դժվար բանը գրքերը
տեղ հասցնելու գործն ե։ Այս արդեն մեկ կոմ
յերկու գիրք բերելու հարց չե. անհրաժեշտ ե
գրքերը ուարքերաբար, տեսական ժամանակա-
միջնոցում հավաքել գրադարաններից, բերել

(յես կարծում եմ, վոր միանդամայն բավա-
կան կլիներ յերկու շաբաթը մեկ անգամ,
գուցե նույնիսկ ամիսը մեկ անգամ, յեթե
միանդամից շատ զիրք բերվեր) և հետ տա-
նել։ Այս արդեն — յես նույնիսկ չգիտեմ, թե
ինչպես կարելի յե կազմակերպել։ Գուցե այս-
պես. գտնել վորեւ շվեյցար, կամ դուստ-
րան, կամ ցրիչ, կամ մի տղա, վորին յես
կարողանայի վարձատրել, և նա գնար գրքե-
րի հետեւից։ Գրքերի փոխանակումը թե՛ ըստ
աշխատանքի պայմանների, թե՛ գրադարան-
ներից գուրս տալու տեսակետից՝ պահանջում
ե, իհարկե, կանոնավորություն և ծառապա-
հություն, այնպես վոր այդ բոլորն անհրա-
ժեշտ ե կարգավորել։

«Ասելը հեշտ ե, անելը՝ դժվար...» Յես
շատ լավ զգում եմ, վոր այս մտադրու-
թյունն այնքան ել հեշտ իրականացնելի չե.
և վոր իմ «պլանը» կարող ե զնորք գուրս
կալ... Զ հունվարի 1896 թ. կենին («Նամակ-
ներ Հարազատներին» 1931 թ., եջ 14—15)։

Գրադարաններից գրքեր ստանալու և այդ
գրքերը Վաղամիմիր Խլյիչին բանտ հասցնելու
գործն իր վրա վերցրեց Սննա Իլինիշնան։

Աքսորտվայրի ճանապարհին Լենինը 1897
թ. մարտի 4-ից մինչև ապրիլի 30-ը ապրեց
Կրասնոյարսկում։ Այդ ժամանակամիջնոցում
նա հաճախում եր վոմն Յուդինի գրադարա-
նը։ Ահա թե Լենինն ինչ է գրում մորը Կրաս-
նոյարսկից մարտի 10-ին։

«... Յերեկ վերջապես ընկա Յուղինի
այստեղի հոչակալսոր դրադարանը, վորը
(Յուղինը) ինձ սիրավիր դիմավորեց և ցուց
տվեց իր դրապահոցները: Նա թույլ տվեց
ինձ նաև պարապել այնտեղ, և յես կարծում
եմ, վոր այդ ինձ կհաջողվի: (Այստեղ յեր-
կու խոչընդուռ կա. նախ՝ նրա գրադարանը
քաղաքից դուրս են, բայց տարածությունը
մեծ չեն, ընդամենը մոտ յերկու վերստ, այն-
պես վոր այդ հաճելի զբոսանք ե: Յերկրորդ՝
գրադարանի կարգավորումն ավարտված չեն,
այնպես վոր յես կարող եմ տիրոջը չափա-
զանց ծանրաբեռնել հաճախակի գրքեր պա-
հանջելով): Տեսնենք՝ այդ ինչպես դուրս կդա-
դործնականում: Կարծում եմ, վոր յերկրորդ
խոչընդուռն ել կվերացվի: Յես նրա գրադա-
րանին դեռ լիովին չեմ ծանոթացել, բայց
այդ համենայն գեաս գրքերի հիանալի հա-
վաքածու յե: Կան, որինակի համար, ժուռ-
նալների (ամենագլխավոր ժուռնալների) լրիվ
ընտրանքներ (ՈԴԲՕՐԵ), ոկտոս 18-րդ դարի
վերջից մինչև ներկա ժամանակները: Հույս
ունեմ, վոր կհաջողվի դրանք ողտագործել
այն տեղեկությունների համար, վորոնք այն-
քան պետք են իմ աշխատանքի համար...» (Նույն տեղում, եջ 26):

Նույն գրադարանի մասին նա գրում է
նաև մարտի 15-ի նամակում:

«...Գրադարան գնում եմ ամեն որ, և վո-

րովհետեւ դրադարանը քաղաքի ծայրամասից
2 վերստի վրա յե գտնվում, ուստի հարկ է
լինում, վոր յես որական 5 վերստ, մոտավո-
րապես մեկ ժամ, ճանապարհ գնամ: Այդպի-
սի զբոսանքից յես շատ գոհ եմ և զբունում
եմ հաճույքով, թեև հաճախ զբոսանքն ինձ
բոլորովին թմբեցնում ե: Ինչպես յերեաց,
գրադարանում իմ առարկայից շատ ավելի
քիչ գրքեր կային, քան կարելի յեր յենթա-
դրել՝ զատելով նրա ընդհանուր մեծությու-
նից, բայց և այնպես ինձ համար ողտակար
վորոշ բան կա, և յես շատ ուրախ եմ, վոր
կարող եմ այստեղ ժամանակը բոլորովին ի-
զուր չանցկացնել: Հաճախում եմ նաև քաղա-
քային գրադարանը. այնտեղ կարելի յե նա-
յել ժուռնալներն ու թերթերը. նրանք այս-
աել հասնում են տասնմեկերորդ որը, և
յես գեռ ելի չեմ կարողանում ընտելանալ
այդպիսի ուշացած «նորություններին» (նույն
տեղում, եջ 27):

Ընկնելով աքսորավայրը՝ Շուշենսկոյե
դյուլը, վորտեղ թերթերն ու նամակները
հասնում են միայն տասներեքերորդ որը, և
նինը Սիբիրի այդ հեռավոր անկյունում ևս
ձգտում ե զլուխ բերել Մոսկվայի գրադա-
րաններից ողտավելու զործը:

1897թ. մայիսի 25-ին նա Շուշենսկոյե-
յից Մոսկվա, իր քրոջը՝ Աննա Խլիխիչնա
Յելլզարովային գրում է.

«...Յես դեռ շարունակ մտմտում եմ Մոսկվայի գրադարանից ոգտվելու մասին. դրա համար այդաեղ վորեւ բան արե՞լ եք արդյոք, այսինքն՝ մուտք գտե՞լ եք վորեւ հասարակական գրադարան։ Բանն այն ե, վոր յեթե հնարավոր լիներ վերցնել Հ ամիս ժամկետով (ինչպես Ս. Պետերբուրգում, «Վոլոնտեկոնոմիչկակոյե» ընկերության գրադարանում), ապա բանդերուլով առաքումն այնքան թանգ չեր նստի (Փունտը 16 կ., պատվերի համար՝ 7 կ., կարելի յե ուղարկել 4 Փունտ = 64 կ.) և, հավանաբար, ինձ համար ավելի ձեռնտու կլիներ առաքման վրա փող ծախսել և շատ գրքեր ունենալ, քան թե զգալի չափով ավելի շատ փող ծախսել՝ սակավաթիվ գրքեր գնելու համար։ Ինձ թվում ե, վոր այդ ավելի հարմար կլիներ ինձ համար։ Հարցը միայն այն ե՝ կարելի՞ յե գրքեր ստանալ այդպիսի ժամկետով (գրավականով, իհարկե) վորեւ լավ գրադարանից։ Համալսարանի գրադարանից (յես կարծում եմ Միտյայի համար հեշտ կլիներ գլուխ բերել այդ կամ վորեւ ուսանող իրավաբանի միջոցով, կամ ուղղակի զնալ քաղաքատնտեսության պրոֆեսորի մոտ և առել, վոր նա ցանկանում ե աշխատել այդ մասնագիտության գծով և գրքեր վերցնել հիմնական գրադարանից։ Միայն այժմ հարկ կլինի հետաձգել մինչև աշուն) կամ Մոսկվայի իրավաբանական ընկերության գրադա-

բանից (այնտեղ պետք ե տեղեկություններ հավաքել, վերցնել գրադարանի կատալոգը, իմանալ նոր անդամների ընդունելության պայմանները և այլն) կամ մի այլ տեղից։ Հավանաբար Մոսկվայում կան մի քանի լավ գրադարաններ։ Կարելի յե տեղեկանալ նաև մասնավորների մասին։ Յեթե ձեզնից վորեւ մեկը զեռևս մնացել ե Մոսկվայում, ապա, խնդրում եմ, տեղեկացե՛ք այդ բոլորի մասին։

Յեթե գնաս արտասահման, ապա հայտնի՞ր, և յես քեզ մանրամասն կգրեմ այնտեղից ստանալիք գրքերի մասին։ Ինձ ուղարկելի վորքան կարելի յե շատ ամեն տեսակի կատալոգներ՝ բուկինիստների և մյուսների (գրադարանների, գրախանութների)։ Քո Վ. Բւ.» (նույն տեղում, եջ 48)։

Մորը և Մարիա Իլյինիչնային 1897 թ. հուլիսի 19-ին դրամ նամակում վլագիմիք Իլյիչը, պատասխաննելով իրեն համար քաղվածքներ անելու Մարիա Իլյինիչնայի առաջարկին, դրում ե. «Քաղվածքներն, արդեն չգիտեմ, պետք կտա՞ն արդյոք։ Յես հույս ունեմ աշնանից կապվել Մոսկվայի կամ ՍՊԲ-ի վորեւ գրադարանի հետ» (նույն տեղում, եջ 57)։

1897 թ. ձմեռը Իլյիչը նամակ է գրում հարազատներին, վորից յերեսում ե, վոր վորոշ բան հաջողվել ե անել, բայց Իլյիչը նոր հնարավորություններ ե փնտուում։

Մանյաշային

«Ստացա 2 (14) XII-ի քո բացիկը և Սեմյոնովի 2 գիրքը։ Շնորհակալություն՝ նրանց համար։ Նրանք հետ կուղարկեմ շուտով, մի շաբաթից վոչ ուշ (չորեքշաբթի որը (5/1) 24-ին, յես վախենում եմ, վոր փոստատարը բոլորովին չգնա մեղ մոտ)։

Պարզվեց, վոր հենց առաջին յերկու հաստորում վոչ մի հետաքրքիր բան չկա։ Հասկանալի յէ, վոր այդպիսի պատմություններն անխուսափելի յեն անձանոթ գրքեր դուրս գրելու ժամանակ, — և յես նախորոք պատրաստ եյի այդ բանին։

Հուսով եմ, վոր գոնե տուգանք չենք տամի ամիս ևս կղթեն։

Հհասկացա քո Փրազը՝ «Իրավաբանական գրադարանը մտնելու համար, — յես հարցը եմ Կաբլուկովին, — պետք է իրավաբան լինել և իրավաբանական ընկերության յերկու անդամների յերաշխավորություն ներկայացնել»։ Միա^oյն։ Իսկ պետք չէ^o, վոր ինքն ընկերության անդամ լինի։ Յես կաշխատեմ Պիտերի միջնորդ ինձ համար յերաշխավորություն դանել։

Վոր ընկերության անդամ կարող ե դառնալ նաև վոչ իրավաբանը այդ անկասկած ե։ Աեղմում եմ ձեռքդ։ Վ. Ռւ. (նույն տեղում, եջ 77)։

Սակայն քիչ թե շատ կարգավորել գրա-

գրարանների լայն ոգտագործումը Շուշինսկոյեցում չհաջողվեց նաև փոստային բնույթի ոժմարությունների պատճառով։

1898 թվի սեպտեմբերին Վլադիմիր Խլիխ թուլավորթյուն և ստանում Կրասնոյարսկ գնալ՝ ատամները բուժելու համար։ Նա անսահման ուրախ եր այդ ուղևորության առթիվ, բայց այդ ուղևորության ժամանակ ել նա պատրաստվում եր Կրասնոյարսկի գրադարանում քաղվածքներ անելու (նույն տեղում, եջ 130)։

Վերագառնալով աքսորից՝ Լենինը բնակություն հաստատեց Պակովում։ 1900 թ. մարտի 15-ի նամակում նա գրում է մորը.

«Հաճախ այցելում եմ գրադարան և զբոնում եմ»։ Եմիզբացիայի մեջ Լենինը չափազանց շատ եր աշխատում գրադարաններում, բայց այդ բավական թույլ ե արտահայտել հարազատներին գրած նամակներում։

1902—1903 թ. թ., յերբ մենք ապրում ենինք Լոնգոնում, Վլադիմիր Խլիխը ժամանակի կեսը անց եր կացնում Բրիտանական Բանդարանում, վորտեղ գտնվում ե աշխարհի առենահարուստ գրադարանը, հիանալի կալեգավորված սպասարկման տեխնիկայով։ Խլիխը շատ մեծ չափով ողավորում եր նաև Լոնգոնի ընթերցասրահներից, ինչպես այդ յերեսում և 1902 թ. հոկտեմբերի 27-ին մորն ուղարկած նրա նամակից։

«Լոնդոնում շատ ընթերցասրահներ կան» (читалка) — մի անյակ, վորտեղ մանում են ուղղակի փողոցից, այնտեղ նույնիսկ նըստելու բան չկա, այլ միայն կարդալու համար հենարաններ (стойки) և փայտերին ամբարձում լրագրեր. մանողը վերցնում է փայտին ամբարձում լրագրերը և կարդալուց հետո կախում էր տեղը: Այդպիսի ընթերցարանները շատ հարմար են, և ամբողջ որվա ընթացքում մեծ հաճախում ունեն» (նույն տեղում, էջ 286):

Յերկրորդ եմիզրացիայի ժամանակ, յերբ բորբոքվել եյին վեճերը փիլիսոփայական հարցերի շուրջը, և Վաղեմիր Իլյիչը նստել եր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիզմ» դիրքը գրելու, 1908 թ. մայիսին նու ժնեվից մեկնեց Լոնդոն, վորտեղ մնաց մեկ ամսից ավելի՝ հատկապես Բրիտանական թանգարանում աշխատելու նպատակով:

Ժնեվում, վորտեղ մենք յեկանք 1903 թ., Իլյիչն ամբողջ որեր եր անցկացնում «Ընթերցանության ընկերության» (Société de Lecture) գրադարանում, վորտեղ կար հոկայական գրադարան և աշխատելու հիմալիցայմաններ, ուր ստացվում եյին մեծ քանակությամբ լրագրեր և ժուռնալներ՝ ֆրանսերն, գերմաներն և անգլիերեն լեզուներով: Այդ գրադարանը շատ հարմար եր պարագելու համար: Ընկերության անդամները — մեծ

մասամբ ծեր-պրոֆեսորներ — հազվագել եյին համախում այդ գրադարանը. Իլյիչի տրամադրության տակ եր մի ամբողջ կարինետ, վորտեղ նա կարող եր գրել, անկյունից-անկյուն ման գալ, հոգվածների մասին խորհել, գարակներից վերցնել ցանկացած գիրքը.

Իլյիչը ժնեվում յեռանդագին ոգտվում էր նաև կուլինի անվան հարուստ ուռւուական գրադարանից, վորի կառավարիչն եր ընկ. Կարպինսկին: Ապրելով այլ քաղաքներում, հետագայում այդ գրադարանից նա գոքեր եր գուրք գրում:

Փարիզում Իլյիչը գլխավորապես ոգտըմում եր ազգային գրադարանից (Bibliothéque Nationale):

1909 թ. գեկտեմբերին յես գրեցի Իլյիչի մորը՝ գրադարանում նրա կատարած աշխատանքի մասին. «ահա արդեն յերկրորդ չարտին Ե՛ նա վեր ե կենում առավոտյան ժամի 8-ին և զնում գրադարան, վորտեղից վերադառնում եժ. 2-ին: Առաջին որերը գեվար եր այդպես շուտ վեր կենալ, բայց այժմ գոհե և սկսել ե շուտ պառկել քնելու» («Նամակներ հարազաններին», էջ 352):

Բացի Ազգային գրադարանից, Իլյիչը շրջեց նաև Փարիզի մի շարք այլ գրադարաններ, սակայն նրանք քիչ եյին բավարարում իլյիչին: Ազգային գրադարանում չկային պելի ուշ տարիների կատարողները, բացի

գրանից՝ զբքեր տալու գործում գոյավթյան ունելիքն բյուրոկրատական շատ ձևականացման վրաներ: Առհասարակ մրանափայտում գրադարանային գործն արխի-բյուրոկրատիկ ձեռվոր էր գրաված: Քաղաքային ռայոնական դըմադրանները կազմված են համարյա միամային բելենտարիստիկայից, բայց նրանցից ովավելու իրավունք ստանալու համար եւ պետք էր վկայական բերել տանտիրովնից, վորովետք և իր վրա վերցներ տնօղորի կողմից հըշտապահությամբ գրքերը վերադարձնելու պատասխանատվությունը: Տանուերը յերկար ժամանակ մեղ այդպիսի վկայական չեր տուլիս մեր աղքատ գրության պատճառով: Այն բանից, թե վորքան ե կարգավորված գրադարանային գործը, իլլիչը դատում եր կուլտուրայի մակարդակի մասին, գրադարանային գործի գրությունը նրա համար լինդհոնուր կուլտուրականության ցուցանիշ էր:

Ահա թե ինչ ե գրել նա իր մորը կրոկովնից՝ 1914 թ. ապրիլի 15-ին:

«... Փարիզում աշխատելը հարմար չէ, (Bibliothéque Nationale)*-ը վատ ե կարգավորված, — մի անգամ չեր, վոր մենք հիշում ենք ֆնեվը, վորտեղ կարելի յեր ալելի լավ աշխատել, կար հարմար գրադարան, կյանքն ավելի պակաս ջղայնացնող և ավելի քիչ ան-

*) Ազգային գրադարանը: ԽՄԲ.

միտ եր: Իմ թափառման ըոլոր վայրերից յես կընտրելի լոնգոնը կամ ֆնեվը, յեթե միայն ոյլ յերկուսն եւ այնպես հեռու չլինելին: Առանձնապես լավ և ֆընեվն ընդհանուր կուլտուրականությամբ և կյանքի արտակարգ հարմարություններով: Իսկ այստեղ, իհարկե, կուլտուրայի մասին խոսել չարժե — համարյա ինչպես Ռուսաստանն ե, — գրադարանը վատ է, արխիանհարմար, բայց ինձ համարյա չի հաջողվում այստեղ լինել...» (նույն տեղում, եջ 401):

Ցերք մենք կրակովից յեկանք Բեռն, Իւլիչը Մարիա իլլինիչնային 1914 թ. գեկումբերի 9-ին գրում եր.

«... Այստեղ գրադարանները լավ են, և յես վատ չեմ տեղավորվել՝ զբքերից ողտղելու իմաստով: Ամենուրյա լրագրային աշխատանքի ժամանակաշրջանից հետո նույնիսկ հաճելի յե կարգալը: Նադյան այստեղ ունի մանկավարժական գրադարան և մանկավարժական աշխատություն ե գրում...» (նույն տեղում, եջ 404):

1916 թ. փետրվարի 7-ին Վլադիմիր իւլիչը գրում ե Մարիա իլլինիչնային. «Յես ե Նադյան շատ գոհ ենք Յյուրիինց. այստեղ լավ են գրադարանները» (եջ 414), իսկ 1916 թ. փետրվարի 28-ին գրում ե մորը. «Մենք այժմ ապրում ենք Յյուրիինում: Յեկել ենք այստեղի գրադարաններում պարապելու: Լիձն

այստեղ մեզ շատ ե զուր գալիս, գրադարանն-ները շատ ավելի լավ են թեռնի գրադարանն-ներից, այնպես վոր այստեղ ելի կմնանք, թերեւս ավելի, քան ցանկանում ելինք» (Եջ 415):

Յեկ հետո նորից, հոկտեմբերի 9-ին, Մարիա Իլյինիչնային ուղղած նամակում կրկնում ե. «Հյուրիխում գրադարանների ա-վելի լավ են և աշխատելն ավելի հարմար ե» (Եջ 417):

Ծվեցարիայում գրադարանային գործը հիանալի յե գրված: Առանձնապես լավ է կարգավորված գրադարանների միջև գրքեր փոխանակելու գործը: Գերմանական Ծվեցա-րիայի գիտական գրադարանները կապված են Գերմանիայի գրադարանների հետ և նույնիսկ պատերազմի ժամանակ Վլադիմիր Իլյիչին հաջողվում եր իրեն հարկավոր գրքերը գրա-դարանի միջոցով ստանալ Գերմանիայից:

Մյուսը—ընթերցողների հիանալի սպա-սարկումն ե, ամեն տեսակ բյուրոկրատիզմի բացակայությունը, հիանալի կազմված կա-տալոգները, բաց դարակները, բացառիկ ու-չաղիր վերաբերմունքը դեպի ընթերցողը:

1915 թ. ամռանը մենք ապրում ելինք Ռոտհոռնի ստորոտի լեռներում, մի շատ խուլ գյուղակում, և այնտեղ փոստով գրադարան-ներից ստանում ելինք անվճար ուղարկվող գրքեր: Գրքերն ուղարկվում ելին ծալովի

թղթապանակում, վորի վրա ամրացված եր մի տոմս՝ մակագրությամբ, մի կողմում գըր-վում եր այն մարդու հասցեն, վորին ուղարկ-վում ե գիրքը, մյուս կողմում՝ ուղարկող գը-րադարանի հասցեն: Գիրքը վերադարձնելիս պետք եր միայն չըջել մակագիր ունեցող տոմսը և տանել փոստը:

Վլադիմիր Իլյիչն ամեն կերպ գովում եր շվեցարական կուլտուրան և յերազում այն մասին, թե ինչպես կկարգավորվի գրադարա-նային գործը Ռուսաստանում՝ հեղափոխու-թյունից հետո:

Ն. Կրուպսկայա

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, ԶԱՌԵՐԸ, ՀՈԴՎԱԾՆԵՐՆ
ՈՒ ԴԻՏՈՂԻԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ— Ա. Ա.ԴՐԵՅՎԱՅԻՆ

ԿԱՊՐԻ ԿՂ.ՉՈՒՄ (ԻՏԱԼԻԱ)

(ԺՀՆԵՎ ՄԻՒԶԵՎ 1908 թ. ՄԱՅԻՍԻ 1-Ի)

Թանկարգին Մարիա Ֆյոդորովնա։ Ու-
ղարկում եմ Ալեքսեյ Մաքսիմովիչին գրած
ժեր գրադարանավարի նամակը։

Բանն ահա՛ թե ինչումն ե։ Ալեքսեյ Մաք-
սիմովիչին շատ եմ խնդրում ուսանան թեր-
թերում գրել մի լեզալ բաց նամակ, ինդրե-
լով՝ ոգնել ժընելի կուկլինի գրադարանին,
ուղարկելով նրան հեղափոխության գրաւ-
արձանի թերթեր ու նրա պատմությանը վե-
րաբերող նյութեր։

Մի կարծ նամակ, վորը պարզաբանի
լայն հասարակությանը, թե ինչո՞ւ կարևոր
է ոգնել այդ գրադարանին և իր՝ Մաքսիմ
Գորկու, և շատ ուրիշ, նրան հայտնի, գրա-
կանագետների աշխատանքների համար։

Զեղ ինդրում եմ տնօրինել այդ նամակը
հետողաքելու (հուսով եմ՝ Զինովի Ալեք-
սեյեվիչը չի հրաժարվի այս բանում ոգնել)

և այն քիչ թե շատ կարգին ուղղություն ու-
նեցող ուսանական բոլոր լրագրերին և ժուռ-
նալիներին ուղարկելու գործը։

Բարի յեղեք կաղմակերպեցե՛ք այդ բո-
լորը։

«ԼԵՆ. ԺՈՂ.՝ XIII, Էջ 158)։

Խվճ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՆԵԼ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄՍՈ*）

Արեմտյան պետություններում տարած-
ված են վոչ քիչ փափած նախապաշտմունք-
ներ, վորոնցից զերծ ե սուրբ մայր Ռուսիան։
Այնտեղ կարծում են, որինակ, վոր հսկայա-
կան հանրային գրադարանները, հարյուր հա-
զարավոր ու միլիոննավոր հատորներով, բոլո-
րովին չպետք ե կազմեն միայն մի խումբ
դիմունականների, կամ վորպես թե՝ գիտնա-

*) Հողվածը գրել ե՝ Վլադիմիր Խլիչը մինչեւ հե-
տափոխությունը— 1913 թ.— և տպադրուել ե «Ռա-
րոշայա Պրավդա»-յում։ Այդ այնպիսի մի ժամանակ
էր, յերբ բանվորական շարժումը նուսաստանում վե-
լելով եր առըսում, Անդիը փոխադրվել եր Կրակով քա-
ղաքը— ոտհմանին մոտ, ամեն որ գրում եր լայն ծա-
վալվող բանվորական մամուլում— «Պրավդա»-յում,
յերբ նա շարունակ տեսնվում եր ուսանական աշխատող-
ների և IV Դումայի մեջ մտնող՝ բոլշևիկ-պատրամա-
վորների հետ։ Այդ այնպիսի մի ժամանակ եր, յերբ
Վլադիմիր Խլիչն հատուկ ուշագրություն եր նվիրում

կաների, ունեցվածքը, վորոնք ոգտվում են այդ գրադարաններից։ Այստեղ տարորինակ, անհասկանալի, վայրենի նպատակ են դուռմայդ հսկայական, անընդգրկելի գրադարանները մատչելի դարձնել վո՞չ թէ գիտնականների, պրոֆեսորների և այլեայլ մասնագետների ցեխի համար, այլ մասսայի համար, ամբոխի համար, փողոցի համար (ընդգծումն իմն ե. — Ն. Կ.)։

Գրադարանային գործի ինչպիսի՛ սրբագրծություն։ Ինչպիսի՛ բացակայություն «կարգի», վորով իրավացիորեն կարող ենք պարծենալ մենք։ Գրքերից ոգտվելու համար

ժողովրդական կյանքի կոնկրետ հարցերին, մեր պատգամավորների համար ճառեր եր գրում, այդ թեմաների շուրջը հողվածներ եւ գետեղում «Պրավդա»-յում։ Այդ ժամանակիներին են վերաբերում նրա մի շարք հոդվածները ժողովրդական կրթության մասին։ Ծն. կեր Բաղայելի համար նա զրում ե «Ժողովրդական բաւակարության միջամբության քաղաքականության հարցի շուրջը» վերնադրով զեկուցումը։ Կուլտուրայի ժողովրդական լուսավորության, գլուխի հարցերին են նվիրված նրա հոդվածները՝ «Թուսներն ու նեղըրը»։ «Անող անհապատասխանություն», «Մանկական աշխատանքը գյուղացիական տնտեսության մեջ», «Բանվոր դասակարգը և ներմալթուսականությունը»։ «Հընական գլուխի նացիոնալիզացիան»։ Բոլոր այդ հոդվածներում Վաղիմիը իլյիչը ցույց եր տալիս,

հարյուրավոր ձևականություններ ու սահմանափակումներ հնարող տասնյակ չինովնիկական հանձնաժողովների կողմից քննվող ու մակվող կանոնների փոխարեն, ուշադրում չունենալ պանդուլ այն բանի վրա, վոր նույնիսկ քյունը քենուի այն բանի վրա, վոր նույնիսկ յերեխաները կարողանան ոգուվել գրքերի հարուստ ժողովածուներից, հոգալ այն մասին, վոր ընթերցողներն իրենց մոտ, տանը, կարողանան կարդալ պետական գրքերը։ Հանրային գրադարանի փառքն ու պարծանեցը տեսնել վոչ այն բանում, թէ ինչքան հազարյուտ բան կա այնուն 16-րդ դարի վորեան հրատարակությունից կամ 10-րդ դարի բանի ձեռագրեր կան, այլ այն բանում, թէ

թէ ինչպես խոր կազ կա քաղաքական կացութաձեւ (յոկած) ու կուլտուրայի միջև, և մի շարք հոդվածներում—Սմերիկայի կուլտուրան, — վորը քաղաքացիական պատերազմից հետո, յերբ պայքար եր տեղի ունենում ստրկության դեմ հսկայական հաջողություններ ունեցավ կուլտուրական ֆրոնտում, — հաղորդում եր ցարական Ռուսաստանի կուլտուրային։ Կաղորդ այդ հակագրումն արեց նաև գրադարանային դուրսի բնագավառում, ցույց տալով, թէ ի՞նչ «կարելի անել ժողովրդական կրթության համար», ի՞նչ յե անել ժողովրդական գլուխության համար։ Արովակար է անել և ի՞նչ չի կարող արվել ցարիկմի արովակար է անել և անել և ի՞նչ չի կարող արվել ցարիկմի արովակար։

ինչքա՞ն լայն շրջանառություն ունի գիրքը ժողովրդի մեջ, քանի նոր ընթերցող է ներգրավված, վորքան արագ է բավարարվում գրքի յուրաքանչյուր պահանջը, ինչքա՞ն գիրք է տրված տուն տանելու, ինչքա՞ն յելիխա յելերգաված գրադարանից սպավելու, կարդալու համար... (ընդգծումն իմն է — ն. Կ.):

Տարորինակ նախապաշարմունքներ են տարածված արևմտյան պետություներում, և չի կարելի չուրախանալ, վոր մեր փութաշան իշխանությունը հոգատարությամբ ու չանամքով մեղ պահպանում է այդ նախապաշարմունքների ազգեցությունից, մեր հանշարժին հարուստ գրադարանները պահպանում ե փողոցից, խաժամուժից:

Իմ առջեւ ե գտնվում Նյու-Յորքի հանշարժին գրադարանի հաշվետվությունը 1911 թվի համար:

Այդ տարին Նյու-Յորքի հանրային գրադարանը հին յերկու շենքից փոխադրել են քաղաքի կառուցած մի նոր շենքը: Հատորների ամբողջ թիվն այժմ մոտավորապես հասնում է յերկու միլիոնի: Այնպես պատահեց, վոր հաճախորդների ընթերցասրահից առաջին անգամը ուսւերեն գիրք պահանջեցին: Ն. Գրոտայի հեղինակությունն եր այդ՝ «Մեր ժամանակի բարոյական իոլեալները»: Գրքը պահանջատամուր տրվել եր առավոտյան ժ-

Զից 8 ըուպե անց: Գիրքն ուղարկվել է ընթերցողին ժ. 9-ից 15 ըուպե անց:

Մի տարում գրադարանը հաճախել է՝ 1658376 մարդ: Ընթերցասրահում յեղել է 146950 ընթերցող, վորոնք կարդալու համար վերցրել են 911891 հատոր գիրք:

Բայց այդ դեռևս գրադարանի գրքի շրջանառության փոքրիկ մասն է: Գրադարան հաճախել կարող են քչերը: Կրթական գործի խելացի դրվածքը չափվում է նրանով, թե ինչքա՞ն գիրք է տրվում ընթերցողին տուն տանելու, ինչ հարմարություններ են տրամադրվում բնակչության մեծամասնությանը:

Նյու-Յորքի հանրային գրադարանը քաղաքի յերեք ուղղուղներում՝ Մանհետանում, Բրանքսում և Ռիչմոնդում (ընդամենը համարյա յերեք միլիոն բնակչությամբ) ունի քառասուներկու բաժանմունք, իսկ չուտուզ կունենա 43-ը: Ըստ վորում սիստեմատիկարացյն նպատակն է հետապնդվում, վոր յուրաքանչյուր բնակիչ իր տնից վոչ հեռու, քան յերեք քառորդ վերստի վրա, այսինքն վոչ ավելի, քան տաս րոպե ճանապարհ գնալով, ունենա հանրային գրադարանի բաժանմունք, վորը հանդիսանում է ժողովրդական կրթության ամեն տեսակ հիմնարկների ու ձեռնարկությունների կենտրոնը:

1911-թ ընթացքում բաց են թողել տուն տանելու համար մոտավորապես ութ միլիոն

(7914882) հատոր. չորս-հարյուր հազար հատոր ավելի, քան 1910.: Յերկու սեփ բոլոր տարիքի յուրաքանչյուր հարյուր բնակչին ընկնում և տանը կարդալու համար մեկ տառում բաց թողած 267 գիրք:

Գրադարանի 42 բաժիններից յուրաքանչյուրը վո'չմիայն հնարավորություն և տալիս աեղում տեղեկատու գրքեր կարդալու և տան համար գրքեր ստանալու, այլ և շենք և հանդիսանում գիշերային դասախոսությունների, հանրային ժողովների, խելացի զվարճությունների համար:

Նյու-Յորքի հանրային գրադարանում արևելյան լեզուներով կա մոտ 15000 գիրք, հրեական լեզով-մոտ 20000, սլավոնական լեզուներով-մոտ 16000: Գլխավոր ընթերցասրահում, բաց դարակների վրա, ազատ ընդհանուր ողտագործման համար դրված և մոտ 20000 հատոր: Նյու-Յորքի հանրային գրադարանը յերեխանների համար կազմակերպել և առանձին կենտրոնական ընթերցասրահ, այդպիսի սրահներ հետզհետեւ բացելով նաև բաժանմունքներին կից: Գրադարանավարները հոգում են յերեխանների համար ամեն կարգի հարմարություններ ստեղծելու մասին ու տալիս են նրանց տեղեկանքներ: Յերեխանները վերցրել են գրքեր տանը կարդալու համար յերեք միլիոնից շատ քիչ պահաս — 2859888 հատոր (ընդհանուրի մեկ յերրորդից ավելի):

Ընթերցատները հաճախող յերեխանների թիւ վը հասել ե 1120915-ի:

Ինչ վերաբերում ե գրքերի կորուստին, ապա Նյու-Յորքի հանրային գրադարանը կորչող գրքերի թիվը հաշվում և տուն բաց թունված յուրաքանչյուր 100000 գրքին՝ 70-80-90 գիրք: Ահա՛ թե ինչպիսի կարգեր գոյություն ունեն Նյու-Յորքում: Իսկ մեզ ձո՞ւ... (Յերկեր, հ. 16, եջ 529):

ՊԵՏՐՈՎՐԱԴԻՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ^{*)}

1917 թ. նոյեմբեր.

Հեղափոխությանը խելացիորեն, ի-մաստալից կերպով, հաջողությամբ մասնակցելու համար պետք ե սովորել:

*) Լենինը յեղել է ՌԽՖՍՀ գրադարանային գործի վերակազմությունը նախաձեռնողը: «Գրադարանային գործը նա իր սրտին շատ մոտ եր ընդունում: Ինքն անձամբ մշտակես պարապելով գրադարաններում՝ գիտեր, տեսնում եր, թե ինչպես մեր յերկիրն այդ Փրոնտում սարսափելի հետ ե մնում»: (Ն. Կ. Կրուպսկայա «Ինչ ե դժել և ասել լենինը գրադարանների մասին» գրքույթի նախաբանը, տես սույն ժողովածուն): Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ օրերին լենինը գրեց իր առաջարկները Պետրոգրադի հանրային գրադարանին՝ նքա աշխատանքները նոր ձեռք

Ցարիզմի կողմից ժողովրդական լուսավորությանը հասցրած բարձրացած յա վնասի պատճառով գրադարանային գործը Պետրո-գրադում շատ վատ և դրված:

Անհապաղ և անպայման անհրաժեշտ են Հետեւյալ հիմնական բարեփոխումները, վորոնց յելակետներն Արևմուտքի ազատ պետություններում, հատկապես Շվեյցարիայում և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում վաղուց իրականացված սկզբունքներն են:

1) Հանրային գրադարանը (նախկին կայսերական) պետք է անհապաղ անցնի գրքերի փոխանակման՝ ինչպես Պիտերի ու պարովինցիայի բոլոր հասարակական ու պետական գրադարանների, այնպես և արտասահմանյան (Ֆինլանդիայի, Շվեյցարիայի և այլն) գրադարանների հետ:

2) Գրքերի առաքումը մի գրադարանից մյուս գրադարանին՝ պետք և որենքով ճրի հայտարարվի:

3) Գրադարանի ընթերցասրահը պետք է բաց լինի, ինչպես արվում է կուլտուրական յերկրներում հարուստ մարդկանց սպա-

գերակառուցելու մասին: («Լեն. Ժող.» ԽII. էջ 204—205):

Այսուեղ մեջ բերվող առաջարկները հանձնվել են Հանրային գրադարանին: Ն. Կ.

սարկող մասնավոր գրադարաններում ու ընթերցարաններում, — ամեն որ չբացառելով ուն ու կիրակի որերը, առավոտյան ժ. 8-ից մինչև յերեկոյան ժ. 11-ը:

4) Ծառայողների պահանջվող քանակը պետք է անհապաղ հանրային գրադարան փոխադրվի ժողովրդական լուսավորության մինիստրության դեպարտամենտներից (ծավալելով կանանց աշխատանքը, նկատի ունենալով ուազմական պահանջը տղամարդկանց աշխատանքի նկատմամբ), վորտեղ 9/10-ը զբաղված են վո՛չ միայն անողութ, այլ և վնասակար աշխատանքով:

ԴՐԱՆԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԴՐԱՄՔԻ ՄԱՍԻՆ*)

ՃԿԽ-Ի ՎՈՐՈՇՈՒՄ

1918 թ. Հունիսի 17

ՃԿԽ-Ն ի ցույց է դնում Ժողովրդական Լուսավորության Կոմիսարիատին՝ Ուսասատանում գրադարանային գործի ճիշտ

*) 1918—1919 թվականների ընթացքում լենինը բարձրից սրել ե ՃԿԽ-ի ուշադրությունը գրադարանների նոր ձևով աշխատելու հարցի վրա, 1918 թ. ապրիլի 26-ի ԺԿԽ գեկուցում լսեց արխիվների ու գրադարանների կենտրոնական վարչություն կազմակերպելու մասին և հանձնաժողով կազմեց՝ «արխիվների

գրվածքի նկատմամբ նրա անբավարար հոգացողության համար և հանձնարարում եկոմիսարիատին անհապաղ ամենայեռանդում միջոցներ ձեռք առնել 1-ին՝ Ռուսատանի գրադարանային գործը կենտրոնացնելու համար, 2-րդ շվեցարական-ամերիկյան սիստեմ մտցնելու համար։

Ժողովրդական Լուսավորության Կոմիսարիատին առաջարկվում ե ամիսը 2 անդամ ժկի-ին հաշվետվություն ներկայացնել այս մասին թե նա գործանականորեն ինչ ե արել այդ բնագավառում։

Կենտրոնական վարչություն կազմակերպելու մանրամասն նախադիծ, ինչպես և առանձնապես վողջ գրադարաննային գործը շվեցարական—ամերիկյան սիմումով վերակազմելու նախադիծ մշակելու համար (արձ. № 104,5 ԽՄԵԼ արխ., № 11,399)։ Հանձնաժողովի աշխատանքն առաջ եր գնում չափազանց դանդաղ տեմպով։ 1918 թ. հունիսի 7-ին, ժկի-սությունների սոցիալիստական ակադեմիայի կանոնագրության» քննության ժամանակ (տես «Լեն.Ժող.», XXI, եջ 207) Լենինն ուրիշագույն այստեղ մեջ բերվող գորոշումը, վորը և ընդունեց ժկի (ժկի արձ. № 184, կետ 2, ԽՄԵԼ արխիվ № 11.577)։ Վորոշման առաջին ժառը հրապարակվել ե 1919 թ. հունվարի 17-ի № 11 «Իզպեստիա ՎՅԻԿ-ում»։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԴԵԿՐԵՏԸ

ԴՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ ԳՐԱՊԱՀՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Հոդվ. 502, որինադր. ու կարգադր. ժող. № 52, հրապարակված և 1918 թ. հունիսի 21-ին)։

Լուծարքի յենթարկվող ու դատարկվող պետական հիմնարկությունների բոլոր գրադարանները, ինչպես նաև առանձին ընկերությունների ու անձերի գրադարանները, վորոնք լրիվ կազմով կամ մի մասով մտնում են կառավարական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների և ուրիշների տնօրինության տակ, Ռուսաստանի ֆերատիվ Խորհրդային Հանրապետության բոլոր վայրերում գտնվում են լուսավորության ժողովրդական Կոմիսարիատի հաշվառման մեջ ու նրա պահպանության ներքո։ այդ գրադարանների հետագա նշանակումը, նրանց բաշխումը, նրանք բնակչության ոգտագործման հատկացնելը, նրանց համալրումը, այլ և նոր գրադարանների ստեղծումը —կատարվում է Ռուսաստանի Խորհրդային ֆերատատիվ Սոցիալիստական Հանրապետության Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատի Գրադարանների Բաժնի կողմից։ Այս կամ այն ժողովրդական Կոմիսարիատի իրավասության տակ գտնվող գրադարանների վեցինասության պահպանում։

բի նկատմամբ Գրադարանների Բաժինն իւսկանացնում է թվարկված Փունկցիաները՝ համաձայնության դալով համապատասխան Ժողովրդական Կոմիսարիատների հետ։

Բոլոր հիմնարկություններն ու կազմակերպությունները, վորոնց վրա հաշվում են, կամ վորոնց անտեսության տակ դժոնվում են վորևէ տեսակի գրադարաններ, պարտավոր են վոչ ուշ քան ս.թ. ոգոստոսի 15-ը այդ մասին իրազեկ անել Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի Գրադարանների Բաժնին։ սույն կանոնը չկատարելը դիտվում է վորպես հեղափոխական որինակարգի խախտում ու յենթակա յե դատական պատասխանատվության։

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահ՝
Վլ. Ռույանով (Լենին)։

Դորձերի Կառավարիչ՝
Վլ. Բոնչ-Բրույեվիչ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ

1919 թ. հունվարի 14-ին

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդագր Նորից ի ցույց է դնում Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատին՝ Ռուսաստանի գրադարանային դորժի ճիշտ դրվագի վե-

րաբերյալ նրա անբավարար հոգացողությունը և հանձնարարում է Կոմիսարիատին անհապաղ ամենայեռանդուն միջոցառումներ ձեռնարկել, առաջին՝ Ռուսաստանի գրադարանային դորձը կենտրոնացնելու համար, յերկրորդ՝ շվեյցարական — ամերիկյան սիստեմ մտցնելու համար։

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Քարտուղար՝ Լ. Ֆոտիյեվա.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ

1919 թ. հունվարի 30-ին

Հանձնարարել Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի Գրադարանային Բաժնին ամեն ամիս հարաբեկել ու Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին ներկայացնել հակիրճ փաստական տվյալներ՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1918 թ. հունիսի 7-ի և 1919 թ. հունվարի 14-ի վորոշումների իրական կենսագործման մասին և գրադարանների ու ընթերցարանների թվի գրական ծավալման ու բնակչության մեջ գրքերի տարածման աճման մասին։

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահ՝ Վլ. Ռույանով (Լենին)։
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Քարտուղար՝ Լ. Ֆոտիյեվա.

ՀԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԸ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ
ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ

Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի նախագահ
ընկեր Լենինի կողմից*)

Գրադարանային դործն... ամենից ավելի յէ պահանջում մքցության կոչ առանձին նահանդների, խմբերի, ընթերցողների և այլոց միջև։

Հաշվետվության ճիշտ կազմակերպումը պետք է ծառայի Յ նպատակի. 1) ինչպես խորհրդային իշխանությանը, այնպես և բոլոր քաղաքացիներին ստույգ ու լիակատար

*) Այդպիսի փաստաթուղթ 1919 թ. գիտրվարին և առժողովատի Արտադպրոցական բաժնի Գրադարանային բաժանմունքին ըստարկել և իլլիչը։ Առանձնացված ե այն, ինչ վոր ընդդեմ և իլլիչը։ Տեքստը պահպանված է առանց փոփոխությունների։ 1918—19 թվերին, յերբ խորտակված ելին հին հիմնարկությունները, լենինն առանձնակի ուժով ընդդում եր արտադրողականության բարձրացման համար, նոր ձևով աշխատելու կարողության զաստիարակման համար, առօսաներին գիտելիքներով զինելու անհրաժեշտությունը։ Նա պահանջում եր հենց իրենց՝ մասսաների, իրեն՝ բնակչության ներգրավումը կուլտուրական շինարարության գործում, նա սոցմրցման մեջ տեսնում եր մասսաների ակտիվությունը բարձրացնելու միջոցը, գործար հաշվետվությունը, հաշվառքը բարձր առ-

կերպով ծանոթացնել այն բանին, ինչ վոր կատարվում է. 2) աշխատանքի մեջ քաշել իրեն՝ բնակչությանը. 3) գրադարանային աշխատաղների մրցակցություն առաջ բերել։

Հստ իս՝ հաշվետվությունների Փորմուլարները պետք ե պատրաստվեն կենտրոնում, արտատպվեն նահանգներում, ուղարկվեն բոլոր գրադարաններին, ակումբներին և այլն։

Որինակների մեջ պետք է առանձնացված լինեն (թավատառ) այն պարտադիր հարցերը, վորոնց չպատասխաննելու համար գրադարանների վարիչները դատական պատասխանառության են յենթարկվում, իսկ հետո պահանջել բազմաթիվ վոչ պարտադիր հարցեր։

Այնանի վրա զնելու միջոցը, առանց վորի չի կարելի իւլացիորեն զնել աշխատանքը։ Նա հաշվետվությունների պահանջում եր պարզություն և ճշտություն։ Եվ այդ բոլոր մոմենտներն արտացոլված են լուսժողկումանի արտադպրոցական բաժնին Վլադիմիր Իլիչի մասի ցուցումների մեջ։ Այժմ, 1933 թ., յերբ յերկիրն ընդդրկված է սոցմրցմամբ, յերբ մենք տեսնում ենք նրա դրական արդյունքները, յերբ մենք տեսնում ենք, թե ինչ ավեց կուլտուրական՝ իրենց՝ մասսաների ներգրավումը կուլտուրական շինարարության գործի մեջ, մենք չառ ավելի մեծ ուշագրությամբ կհարդանք 1919 թ. վերաբերող՝ լենինի ցուցումները։ Այդ ցուցումներն անհրաժեշտ ե իրագործել կյանքում։

Հարցերի ձեռվ պարտադիր §§-ի շարքը պետք է դասել բոլոր բարելավումները, վորոնք կիրառվում են Շվեյցարիայում, Ամերիկայում (և այլ յերկրներում), վորպեսզի կարելի լինի խրախուսել պրեմիաներ տալլ (արժեքավոր հրատարակություններ, կոմպլեկտեր և այլն) նրանց, ովքեր մտցրել են ամենից ավելի շատ բարելավումներ ու ամենալավ յեղանակով։ Որինակ՝ 1) կարո՞ղ եք արդյոք ճշգրիտ տվյալներով ապացուցել ձեր գրադարանի գրքերի շրջանառության աճումը, կամ 2) ձեր ընթերցարանի հաճախելությունը, կամ 3) գրքերի կամ լրագրերի փոխանակումն ուրիշ գրադարանների ու ընթերցարանների հետ, կամ 4) կենտրոնական կատալոգ կազմելը, կամ 5) կիրակի որերի ոգտագործումը, կամ 6) յերեկոների ողտագործումը, կամ 7) ընթերցողների նորանոր շերտերի՝ կանանց, յերեխաների, վոչ ուսուների և այլն ներդրավումը, կամ 8) ընթերցողներին ձեր կողմից տեղեկանքներով բավարարելը, կամ 9) պարզ, գործնական յեղանակների գործադրումը՝ գրքերը կամ լրագրերը պահելու համար, նրանց պահպանության համար, դրանց մեքենական համախմբումն ընթերցանության միջոցին ու տեղերը դնելը, կամ 10) գրքերը տուն տալլ, կամ 11) յերաշխիքների պարզեցումը գրքերը տուն տալու դեպքում կամ 12) փոստով ուղարկելու դեպքում և այլն և այլն։

Լավագույն հաշվետվությունների ու հաջողությունների դեպքում պարզեվատրել պրեմիաներով...

Լենին

(«Կնիքանոշա» № 4/35, 26.1—1924թ.)

ՎՈՂՋՈՒՅՆԻ ՀԱՌ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ Ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ*)

... Յերբ յես Ժողովրդական Կոմիսարների Խորհրդում շոշափեցի... գրադարանային հարցը, յես ասում եյի՝ այն գանգատները, վորոնք շարունակ լավում եյին, թե մեղավոր ե մեր արտադրական հետամնացությունը, մենք քիչ գրքեր ունենք և մենք չենք կարողանում արտադրել այն բավարար քանակությամբ, — ինքս ինձ ասում եմ — այդ ճիշտ ե։ Իհարկե մենք վառելիք չունենք, գործարանները կազմած են, թուղթը քիչ ե, և գրքեր ստանալ մենք չենք կարող։ Այդ բոլորը ճիշտ ե, բայց բացի գրանից ճիշտ ե և

*) Արտադպրոցական կրթության համառուսական Ի համադրումարում 1919թ. մայիսի 6-ին արտասահմած ճառը նպատակ ե ունեցել ընդգծելու գրադարանային գործի ամրող Բշանակությունը մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման համար, ընդգծելու այդ գործի քաղաքական նշանակությունը, պլանայնության անհրաժեշտությունն այդ գործում, նրա ուսցիունավորացիան։ Ն. Կ.

այն, վոր մենք չենք կարողանում վերցնել այն գրքույկը, վորը կա մեզ մոտ: (Ընդհումն իմն ե:— Ն. Կ.) Այդ տեսակետից մենք շարունակում ենք տառապել գեղջկական միաժամտությունից ու գեղջկական անձարակությունից, յերբ մուժիկը, կողոպտելով աղայական գրադարանը, փախչում եր տուն ու վախենում՝ չի՞նի հանկարծ վորեւ մեկը հետ իւի այն, վորովհետև այն միտքը, վոր կարող է լինել ճիշտ բաշխում, վոր գանձարանը ինչ-վոր ատելի մի բան չե, վոր գանձարանը — բանվորների ու աշխատավորության ընդհանուր ունեցվածքն ե, այդ գիտակցությունը նրա մոտ գեռես չեր կարող լինել: Անզարդացած գյուղացիական մասսան այդ բանում մեղավոր չե, և հեղափոխության զարգացման տեսակետից այդ միանդամայն որինական ե, — այդ անխուսափելի մի փուլ ե, և յերբ գյուղացին գրադարանը տանում եր իր մոտ և ուրիշներից դադունի պահում, նա այլ կերպ վարվել չեր կարող, վորովհետև նա չեր հասկանում, վոր կարելի յե՛տուսաստանի գրադարաններն ի մի միավորել, վոր գրքեր բավական կլինեն՝ գրագետի ծարավը հազեցնելու, և անգրագետին սովորեցնելու համար: (Ընդհումն իմն ե:— Ն. Կ.): Այժմ անհրաժեշտ ե պայքարել կազմալուծման մնացորդների դեմ, քառսի դեմ, գերատեսչական ծիծաղելի վեճերի դեմ: Այդ

պետք է լինի մեր գլխավոր խնդիրը: Մենք պետք ե ձեռք զարկենք գրադետներին մոռիշիղացիայի յենթարկելու և անգրագիտության դեմ պայքարելու հասարակ ու կենսական գործին: Մենք պետք ե ոգտագործենք այն գրքերը, վոր ունենք, և սկսենք գրադարանների կազմակերպված ցանց ստեղծելու գործը, վորոնի ոգնելին ժողովրդին՝ ոգտագործելու մեր ունեցած յուրաքանչյուր գրքույկը, գուգահեռ կազմակերպություններ չստեղծել, այլ միասնական, պլանաչափ մի կազմակերպություն ստեղծել (Ընդհումն իմն ե:— Ն. Կ.): Այս փոքրիկ գործի մեջ արտացոլվում է մեր հեղափոխության հիմնական խնդիրը:

Յեթե մեր հեղափոխությունը չլուծի այս խնդիրը, յեթե նա դուրս չդա իրապես պլանաչափ միասնական կազմակերպություն ստեղծելու ուղին, ուռւսական անմիտ քառսի և անհեթեթեռության փոխարեն, — ապա այն ժամանակ այս հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն կմնա, վորովհետև գեպի կոմունիզմ գնացող պրոլետարական հեղափոխության հիմնական առանձնահատկությունը հենց այդ ե, իսկ բուրժուազիայի համար բավական եր խորտակել հինը և ազատություն տալ գյուղացիական տնտեսությանը, վորը հենց նույն կապիտալիզմն եր վերածնում, ինչպես և նախորդ ժամանակների բոլոր հեղափոխությունների միջոցին:

ՅԵթե մենք կոմունիստների կուսակցություն ենք կոչվում, պետք է ըմբռնենք, վորժիայն այժմ՝, յերբ հաղթահարել ենք արտաքին արգելքները, խորտակել ենք հիմնարկները, մեր հանդեպ առաջին անգամ իսկական ձեռվ ու ամբողջ հասակով ծառացել են խորական պրոլետարական հեղափոխության առաջին խորհրդը, — առանցյակ ու հարյուրմիլիոնավոր մարդկանց կազմակերպումը։ Մեկ և կես տարվա փորձից հետո, վոր մենք բոլորս արել ենք այս ասպարեզում, պետք է, վերջապես, կանգնենք այն ուղիղ ճանապարհի վրա, վորը հենց կհաղթեր այն անկուլտուրականությանը և այն խավարին ու վայրենությանը, վորից մենք միշտ տառապելու առիթ ունենք։ (Յերկեր, — XXIV հատ. եջ 277-278)։

ԴԵԿՐԵՏ՝ ՈԽԹՍՀ-Ի ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով դրբի ավելի և ավելի ուժող հոկայական պահանջը՝ Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը վորոշում է.

1. Բոլոր գրադարանները, ինչպես Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ներքանիության տակ գտնվող, այնպես և բոլոր մնացած գերատեսչությունների, հիմնարկությունների ու հասարակական կազմակերպությունների գրադարաններ։

բարվում են հանրամատչելի, համախմբվում են ՌԽՖՍՀ միասնական գրադարանային ցանցի մեջ և հանձնվում են Լուսժողկոմատի (Քաղղուսպլիշարի) իրավասությանը։

2. Միասնական գրադարանային ցանցը կյանքում իրագործելու և աշխատանքը կոորդինացիայի յենթարկելու համար Քաղղուսպլիշարի հանձնաժողովը հետևի կազմվում է կենտրոնական միջերատեսչական գրադարանային հանձնաժողով հետևյալ կազմով։ Լուսժողկոմատից և հոգի (Քաղղուս գլխվար, դպրոցական և գիտական սեկտոր և արհլուսպլիշվար), ՀԱՄԿԽ-ից, — 2 հոգի, ՀՌՀԽԲ Վ-ից* 1 հոգի։

Ծանրություն. Հանձնաժողովի անդամներին հաստատում են Լուսժողկոմատը։

3. Հանձնաժողովի իրավասությանը յենթակա յեն. ա) գրադարանների տիպերի սահմանումն ու փոփոխումը, բ) պլանների մշակումն ու հաստատումը և գրքային հարստությունների վերաբաշխումը, գ) այլ գերատեսչությունների գրադարանները Լուսժողկոմատի իրավասությանը հանձնելու կարգի սահմանումը, դ) գրադարանային ցանցի ծավալումը, ե) հատուկ տեխնիկական

*) Հանրապետության Ռազմահեղափոխական Խորհրդի Քաղաքական վարչություն։ ԽՄԲ։

լնույթի գրադարաններից ողտվելու կարգի
սահմանումը և նրանց համալրումը՝ շահա-
գրդումած զերատեսչության հետ համաձայ-
նության դալով, զ) գպրոցական գրադարան-
ներից ողտվելու կարգի սահմանումը և ման-
կական ընթերցանության կազմակերպումը:

4. Տեղական հանձնաժողովներ կազմա-
կերպվում են Պետական հրատարակչության
տեղական բաժանմունքներին կից՝ քաղլուս-
բաժնի, զինկոմատի, ժողկրթբաժնի և արհ-
միությունների տեղական միավորման ներ-
կայացուցիչներից:

5. Միասնական գրադարանային ցանցի
մեջ (բացի հատուկ գրադարաններից), մըտ-
նող բոլոր գրադարանները մատակարարվում
են տեղական հաշվիչ-բաշխիչ հանձնաժողով-
ների միջոցով, վորոնք գրքերն ստանում են
Պետական հրատարակչության կից կենտրո-
նական բաշխիչ հանձնաժողովից:

6. Կենտրոնում, Քաղլուս. Գլխ. վարչու-
թյան գրադարանային յենթաբաժնին կից
կազմակերպվում ե կենտրոնական գրադարա-
նային կոլեկտոր, վորը նոր կազմակերպվող
տարրեր տիպի գրադարանների համար գրքե-
տարրեր կոմպլեկտներ ե մատակարարում ժողո-
վը գրդական կրթության գալառային բաժին-
ներին:

7. Քաղլուսվարների գրադարանային սեկ-
ցիաներին կից կազմակերպվում են գրադա-

րանային կոլեկտորներ (բաշխիչներ), վորոնք
ունեն հրահանգիչների հաստիք և կատարում
են գրադարանների կոմպլեկտավորման ամ-
բողջ աշխատանքը:

Փողովրդական կոմիսարների Խորհրդի
նախագահ՝ Վ. ՈՒՀՅԱՆՈՎ (ԼԵՆԻՆ)
Փողովրդական կոմիսարների Խորհրդի
գործերի կառավարիչ՝
Վ. ԲՈՆՉԵՐՈՎԻՉԵՎԻՉ
Փողովրդական կոմիսարների Խորհրդի
քարտուղար՝ Լ. ՖՈՏԻՅԵՎԱ.*

Յ Նոյեմբերի 1920 թ.

ՀԱՏՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ
ՎԵՐՍԱԲԵՐՅԱԼ ԹԵԶԻՍՆԵՐԻՑ

... 7. արտադրական լրագիրը պետք ե
լինի պոպուլյար, միլիոններին մատչելի լի-
նելու իմաստով, սակայն չպետք ե ընկնել
ծայրահեղ պոպուլյարականության (պուլ-
յարնիկանելու) մեջ։ Զիջնել մինչև անզարդացած
ընթերցողի աստիճանը, այլ անշեղորեն —
չատ զգույշ աստիճանականությամբ — բարձ-
րացնել նրա զարգացումը։ Մի քիչ տեղ ա-
ռանձնացնել, մոտավորապես $\frac{1}{4}$ -ից վոչ ավե-
լի, — քաղաքականությանը։ Գլխավոր տե-

*) Կառավարական որենքների և կարդագրություն-
ների ժողովածու — 1920 թ. № 87, էջ 439։ ԽՄԲ։

Ղը—միասնական տնտեսական պլանին, աշխատանքային ֆրոնտին, արտադրական պրոպագանդային, կառավարելու գործը բանվորներին և գյուղացիներին սովորեցնելուն, խորհրդային հիմնարկությունների ու տնտեսությունների որենքների ու ձեռնարկումների իրական կենսապորձման ստուգմանը, լայն և ճիշտ մտքերի փոխանակությանը մասսայական ընթերցողի հետ:

8. Լրագրում տպվող, լրագրին ուղարկվող, ինչպես նաև այլ նյութերը պետք է սիստեմատիկորեն պարբերաբար վերահսկակիվեն գրքույկներով ու թոռոցիկներով՝ զրադարաններին և ապա տվյալ արտադրության բոլոր գործարաններին ու ձեռնարկություններին պարտադիր կերպով մատակարարելու համար։ Գրքույկներն ու թոռոցիկները պետք են սիստեմավորեն նյութերն ըստ արտադրությունների։ Դասագրքերի և արտասահմանյան տեխնիկայի տեսությունների հետ միասին այդ նյութը պետք է ծառայի պրոֆտեխնիկական ու պոլիտեխնիկական կրթության տարածման համար։

Առանձնապես լրագրի, ինչպես նաև արտադրական գրքույկների ու թոռոցիկների տվյալի ճիշտ բաշխումը ՌԽՖՍՀ բոլոր գրադարաններին՝ պետք է դառնա հատուկ ուշադրության առարկա (Յերկեր, XXV հատ., եջ 479)։

«ԼՈՒՍՓՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՄՈՒՆԻՍՏ-ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ
ՈՒՂՂԱԾ՝ ԿԵՆՏԿՈՄԻ ԴԻՐԵԿՏԻՎՆԵՐ»-ի 3
(«Պրավդա» № 25, 5 փետրվարի 1921 թ.)

...7. Չափաղանց անրավարար եղանակներ ինչպես գլուխական, այնպես և վոչ պարզական գրագարաններին ու ընթերցարաններին լրագրեր, բրոցյուրներ, ժուռալներ ու գրքեր բաշխելու գործը։ Այստեղից բըդիսում է այն, վոր լրագիրն ու գիրքը խլում է խորհրդային ծառայողների բարակ շերտը և անչափ քիչ է հասնում բանվորներին ու գյուղացիներին։

Անհրաժեշտ է ամբողջ այդ գործի արմատական վերակազմումը (Յերկեր, XXVI հ., եջ 159)։

«ԼՈՒՍՓՈՂԿՈՄԱՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀՈՂՎԱԾԻՑ

... 1920 թ. նոյեմբերի 3-ին ԺԿԽ հրատարակել է գեկրետ «Գրադարանային գործի կենտրոնացման մասին» (Որենքների Ժողովածու, 439 հոդված, 1920 թ. № 87), ՌԽՖՍՀ միասնական գրադարանային ցանց ստեղծելու մասին։

Ահա! մի քանի վաստական տվյալներ, վոր այս խնդրի վերաբերմամբ ինձ հաջողվեց ստանալ ընկեր Մալիկից («Վենտրոպետար»-ից), և ընկեր Մողեստովից (Ժողո-

Վրդական կրթության Մոսկվայի բաժնի դրա-
դարանային սեկցիայից)։ Կենտրոնական Խոր-
հըրթային Ռուսաստանի (չհաշված Սիբիրը և
Հյուսիսային Կովկասը) 38 նահանգների, 305
դավառների դրադարանների թիվը հետեւյալն
էր։

Կենտրոնական դրադարաններ	342
Ռայոնական քաղաքային »	521
Վոլոստային » » »	4.474
Շրջիկ » » » » »	1.661
Խրճիթ ընթերցարաններ	14.739
Այլ (գյուղական, մանկական, տեղե- կատու, զանազան հիմնարկների, զանազան կազմակերպությունների) .	12.203

Ընդամենը . . . 33.940

Ընկեր Մոդեստովն իր փորձի հիման վրա
յենթաղում ե, վոր այս դրադարանների մոտ
3/4-ն խկապես զոյություն ունի, իսկ մնացա-
ծը՝ միայն թղթի վրա յե։ Մոսկվայի նահան-
գում, ըստ «Յենտրոպեչատ»-ի տվյալների,
կա 1.223 դրադարան, ըստ ընկեր Մոդեստո-
վի տվյալների՝ 1.018, այս թվում՝ 204-ը
քաղաքում և 814-ը նահանգում, չհաշված
արհմիությունների դրադարանները (հավա-
նորեն մոտ 16) ու զինվորական դրադարան-
ները (մոտ 125)։

Վորքան կարելի յե գատել առանձին նա-
հանգներին վերաբերող տվյալների համեմա-

տությունից, այս թվերի հուսալիությունը
շատ մեծ չե. վա՛յ թե իրականում 75% ավե-
լակաց յինի, քան նշանակված ե ցուցակ-
լի պակաս յինի, որում նահանգում, որինակ,
1703 խրճիթ-ընթերցարան կա, Վլադիմիրի
նահանգում՝ 37, Պետրովդրագի նահանգում՝
98, Իվանովո-Վոլոնեսենսկի նահանգում՝ 75,
և այլն։ «Այլ» դրադարաններ կան Պետրո-
վրադի նահանգում՝ 36, Վոլոնեժի նահան-
գում՝ 825, Ուֆայի նահանգում՝ 525, Պոկո-
վի նահանգում՝ 31 և այլն։

Ըստ յերկութին, այս տվյալները հենց
այն են ցույց տալիս, վոր բանվորների ու
գյուղացիների մասսայի վերելքը դեպի գի-
տություն — վիքխարի յե, կրթության ու
գրադարաններ ստեղծելու ձգումը, — հզոր,
«ժողովրդական», քառի խկական իմաստով։
Սակայն ժողովրդի այս ձգումը կազմակեր-
պելու, կարգավորելու, ձևակերպելու կարո-
գությունից, այս ձգումանը նիշտ բավարա-
րում տպու կարողությունից մենք շատ, շատ
հեռու յենք։ Խկապես միասնական գրադա-
րանային ցանց ստեղծելու վրա պետք ե դեռ
շատ, անչափ շատ ու համառ աշխատել (ընդ-
դումն իմն ե։ — Ն. Կ.)։

... Հարկավոր ե ձգտել և հասնել այն
բանին, վոր լրացիրն ու գրքերը, ըստ կանո-
նի, ձրի բաշխվեն միայն դրադարաններին ու
ընթերցարաններին, որանց ցանցին, վորը

կանոնավոր սպասարկում և ամրող յերկրին, բանվորների, զինվորների, դյուլացիների գողջ մասսային։ Այն ժամանակ ժողովուրդը հարյուրապատիկ անգամ ավելի քափով, արագ, հաջողությամբ կրնքանա դեպի գրագիտությունը, դեպի լույսը, դեպի գիտությունը։ Այն ժամանակ լուսավորության գործն առաջ կրնքանա յոքմոնանոց ֆայլերով (ընդգծումն իմն ե։—Ն. Կ.):

Ակնառու դարձնելու համար, իրեն որինակ, բերենք մի փոքրիկ հաշիվ։ 350 հազար «Իզվեստիա» ու 250 հազար «Պրավդա» ամբողջ Ռուսաստանին։ Մենք աղքատ ենք։ Թուղթ չկա։ Բանվորները մրում ու քաղցում են, մերկ են, բորիկ են։ Մեքենաները մաշկած են։ Շենքերը փլխում են։ Յենթաղրենք, թե մենք ամբողջ յերկրում 10.000-ից քիչ ավելի վոլոստների համար ունենք 50.000 գրադարան ու ընթերցարան, սակայն վո'չ թե թղթի վրա, այլ իրապես։ Յուրաքանչյուր վոլոստին՝ 3-ից վո'չ պակաս, և յուրաքանչյուր գործարանին կամ Փաբրիկային, յուրաքանչյուր զորամասին՝ անպայման մեկական հատ։ Յենթաղրենք, թե մենք սովորել ենք անել վո'չ միայն «առաջին քայլը կապիտալիզմից դեպի կոմունիզմ», այլև յերկրությունը քայլը։ Յենթաղրենք, թե մենք սովորել ենք ուղիղ բաշխել 3-ական որինակ վորել յուրաքանչյուր գրադարանին ու ըն-

թերցարանին, վորոնցից 2-ը, յենթաղրենք, «պատերին փակցնելու» համար ե (յենթաղրենք), վոր մենք չորսորդ քայլն ենք արել կալով, վոր մենք չորսորդ քայլն ենք արել կալով, վոր մենք փայտալիզմից դեպի կոմունիզմ, յես թույլ եմ տալիս մտածել, համարձակվում եմ մտածել վոր բարբարոսական ձևով «փակցնելու» փոխարեն, վորը փչացնում է լրագիրը, մենք այն ամբացնում ենք փայտե մեխերով—յերկաթե մեխեր չունենք, «չորրորդ քայլում» ևս դեռ յերկաթի պակասություն կզգանք — ամբացնում ենք հարթ տախտակի վրա, վորպեսզի հարմար լինի կարգալու և լրագիրը պահպանվի։ Յեկայական, յերկուական որինակ 50.000 գրադարաններին ու ընթերցարաններին՝ պատերին «փակցնելու» համար, մեկական որինակ ել՝ պահելու համար։ Այսուհետեւ յենթաղրենք, վոր «Խորհրդյուրո»-ներին իզուր տեղը լրագիր տալը սովորել ենք չափավորել, ասենք, վոչ ավելի, քան մի քանի հազար որինակ՝ ամբողջ Խորհրդային Հայրապետության յերես առած «բարձր աստիճանավորներին»։

Այսքան համարձակ յենթաղրությունների դեպքում 160, դիցուք 175.000 որինակը բավական կլինի ամբողջ յերկրին հինգ անգամ ավելի լավ, քան այժմ։ Բոլորը լրադրից ուեղեկություն ստանալու հնարավորություն կունենան (յեթե, ինչպես հարկն ե, կազմակերպվեն շրջիկ գրադարան — ընթերցա-

բաններ, վորոնց կարեսրությունն իմ կարծիքով, այնքան հաջողությամբ որերս պաշտպանում եր ընկեր Ֆ. Դոբլերը «Պրավդայում»): Յերկու լրագիր՝ 350.000 որինակ: Այժմ 600.000 ե, վոր հավատակում են «Խորհրդյուրում»-ները, իզուր փչացնում, «ծխախոտի թուղթ» դարձնում և այլն, պարզապես կապիտալիստական սովորույթների ուժով: Տնտեսումը կլիներ 250.000 որինակ: Այլ խոսքով՝ տնտեսած կլիներներ մեզ համար, չնայած մեր աղքատությանը, յերկու ամենորյա լրագիր՝ 125.000-ական որինակով: Յեվ յուրաքանչյուր այդպիսի լրագրի մեջ ամեն որ կարելի յեր ժողովրդին տալ լուրջ ու արծեքավոր գրական նյութ, լավագույն ու կլասիկ բելետրիստիկա, հանրակրթական դասագրքեր, գյուղատնտեսական դասագրքեր, արդյունաբերական դասագրքեր (ընդգծումն իմն ե:—Ն. Կ.): Յեթե Փրանսիական բուրժուաները, գեռ պատերազմից առաջ արդեն, սովորել ելին փող վաստակելու նպատակով ռոմաններ հրատարակել ժողովը՝ դի համար վոչ թէ 3½ Փրանկով, ինչպես պայտական գրքերն ելին, այլ 10 սանտիմով (այսինքն 35 անգամ ավելի եժան, նախապատերազմյան կուրսով՝ 4 կոպեկ), պրոլետատական լրագրի նման, ապա ինչո՞ւ մենք ևս չսովորենք նույն ձևով վարվել կապիտալիզմից դեպի կոմունիզմ արվող յերկրորդ քայլ

լի ժամանակ: Ինչո՞ւ մենք եւ չսովորենք՝ նույն կերպ վարվելով՝ հասնել այն բանին, վոր մեկ տարում — նույնիսկ մեր այժմյան աղքատ վիճակում—50.000 գրադարաններից ու ընթերցարաններից յուրաքանչյուրին 2-ական որինակ հատկացնելով՝ ժողովրդին տանք բոլոր անհրաժեշտ դասագրքերն ու համաշխարհային գրականության, արդի գիտության, ժամանակակից տեխնիկայի բոլոր անհրաժեշտ կլասիկները (ընդգծումն իմն ե:—Ն. Կ.): Կսովորենք: (Յերկեր, XXVI հ., եջ 163):

ՆԱՄԱԿ ԸՆԿ. ԼԻՑԿԵՆՍԻՆ

17 մայիսի 1921 թ.

«Նովայա Մետլա»-ն Ցենտրոպեչատում նշանակելու առիթով, պետք ե ոգտվել մոմենտից ու սահմանել նշուրոշ վարչական սյատասխանատվություն:

1) ամենաճշգրիտ ձևով գրավոր սահմանել՝ ինչի՞ համար են պատասխանատու Ցենտրոպեչատի պետը և նահանգային պետերը:

2) նույնը և գրադարանային ցանցի նըկատմամբ.

ա) համապետական (Հանրային և Ռումյանցելյան).

բ) նահանգպական

գ) գավառական

դ) վոլոստային գրադարանների (յեթե վաղաժամ չեւ յեթե Դուք չեւ վորոշել առաջ- ժըմ սահմանափակվել գավառութեաններով)...

3) Հարկավոր եւ, վոր Դուք (և մենք) բացարձակ ճշությամբ իմանաք՝ ո՞ւմ նըս- տեցնել (և՝ «Յենտրոպէչատ»-ից, և՝ դրադա- րանային ցանցից.— անդաման այդ յերկու հիմնարկներից ել), յեթե մեկ ամիս անց (2 շաբաթ, վեց շաբաթ) Խորհրդային յուրա- ժանյուր գիրք լույս տեսնելուց հետո, այդ դիրքը չկա յուրաքանչյուր գրադարանում։ Այս մասին ինձ կարն հաղորդագրություն ու- ղարկեցե՞ք։ Լենին։ («Լեն. Ժող.», XX, եջ 312)։

«ՅԵՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԻՑ

Ճառ՝ արտասանած Համառուսական ԿԳԿ 1921 թ- մայիսի 30-ի նիստում

Հաշվետվությունները ապագրելու գլուխ- վոր նորատակներից մեկն ե՝ դրանք մատչելի դարձնել անկուսակցական մասսային ու առ- հասարակ բնակչությանը։ Մենք դրան չենք կարող հասնել մասնայական արտադրության միջոցով, այդ հաշվետվությունների մասսա- յական տպագրումով, այլ միայն գրադարան- ներում կենտրոնացնելու միջոցով (ընդդումն իմն ե—Ն. Կ.): Իսկ քանի վոր այդպես ե, ապա պետք է սահմանել ոչխատանիքի այն-

պիսի յեղանակ, վորակեսզի հաշվետվությունների համառոտ բովանդակությունը, այն ըս- նի եյությունը, վոր ամենից ավելի յեւ հետաքրքրում բնակչությանը, անպայմանորեն տպագրվի։ Դրա համար տեխնիկական հնա- րավորություններ կան։ Յելույթ ունենալուց առաջ յես տեղեկացա «Գլավբում»-ի ներկա- յացուցչից։ Նա ճշգրիտ հաշվետվություններկայացրեց 339 դավառական կետերի վե- րաբերմամբ, վորը ցույց ե տալիս, վոր գտ- վառական կետերից յուրաքանչյուրում տպա- գրական հնարավորություններ կան, կա նաև ամենահամառոտ հաշվետվություն տպագրե- լու համար անհրաժեշտ քանակությամբ թուղթ։ Բնդզմին նա հաշվել ե այն ձեռով, վոր գավառական կենտրոններից փոքրագույ- նը տպում է մեկ տպագրական թերթ, ինք- նըստինքյան հասկանալի յեւ ամիսը մեկ ան- գամ։ Ամիսը մեկ անգամ—դա չափազանց հաճախ ե։ Կասհմանեք արդյոք դուք յերկու ամիսը, կամ չորս ամիսը մեկ անգամ, գու- ցե և ավելի յերկար ժամկետ, —այդ կարվի, բայց յերեսութին, տեղերի ցուցումների հիման վրա։ Որինակների թիվը նա յենթագրում է հազար, և այդպիսով հաշվում ե, վոր թղթի պահանջվող քանակությունն այժմ առձեռն ունենք։ Հազար որինակը կապահովեր այդ հաշվետվությունները տրամադրելու առնի- վազն բոլոր գավառական գրադարաններին

(ընդգծումն իմն ե—Ն. Կ.), և Հետեապես, Հնարավորություն կտար, վոր հաշվետվություններին ծանոթանան բոլոր նրանով հետաքրքրվողները և, մասնավորապես, անկուսակցական մասսաները։ Իհարկե, սկզբում գործը պետք կլինի դնել վորակես փորձ։ յերաշխավորել, վոր այն կհաջողվի միանդամից և վոչ մի թերություն չի լինի, իհարկե չի կարելի։

Յեղափակելով իմ վոչ մեծ լրացումը՝ յես ցանկանում եմ ընդգծել մի բան։ Ամենից կարեռ հարցերից մեկն այժմ անկուսակցականներին աշխատանքի մեջ լայնորեն ներզըրավելն ե և այն բանին հասնելը, վոր իրապես, բացի կուսակցության անդամներից, և համենայն դեպս, բացի յուր գերատեսչության ներկայացուցիչներից, աշխատանքով շահագրգոված և այդ աշխատանքի մեջ ներշրավագած լինի, վորքան հնարավոր ե, անգրաված լինի, վորքան հնարավոր ե, անգրաված լինի, վորքան հնարավոր ե, անգրաված լինի, ավելի լայն մասսա։ Մեղթվում ե, վոր այդ անել այլ կերպ, քան հաշվետվությունների, գոնե նրանց ամենից հյական մասի՝ հրապարակումն ե,— չի կարելի։ Կան հիմնարկներ, վորոնք չափազանց ըրիվ հաշվետվություններ են տալիս։ Այն ամենը, ինչ վոր մենք մինչեւ այժմ գիտեյինք այս հարցի մասին, ապացուցում ե, վոր կան հիմնարկների դրված տեղական հիմնարկներ։ Համենայն դեպս, տեղերի աշխատանքը բավա-

կանաչափի խրախուսիչ արամագլության համար չարունակ բավականին նյութ ե տալիս։ Ինչ վոր իսկապես պակասում ե մեղ մոտ—յափորինակները լայնորեն ոգտագործելու հըմտությունն ե այդ, — զրանք քիչ են մեղ մոտ, վորպեսզի գրանք բոլորի համար պարտադիր որինակ զարձնենք։ Մեր մամուլի որդաններում գործնական փորձ ունեցող իսկապես որինակնելի տեղական հիմնարկների այդ առաջքաշումը չկա։ Հաշվետվության լայնագրումը, բնակչության լայն մասսաներին մատչելի դարձնելը և նույնիսկ յուրաքանչյուր զավառական զբաղարանում կենտրոնացնելը պետք է ծառայի կանոնավոր հակաֆած անկուսակցական կոնֆերենցիաների ոգտին՝ տնտեսական շինարարության աշխատանքի մեջ ավելի լայն մասսաներ ներգրավելու համար (ընդգծումն իմն ե—Ն. Կ.)։ (Յերկեր, XXVI հ., եջ 412)։

ՈԿ(Պ)ԿԿԿ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻՑ

1921 թ. նոյեմբերի 16

Նոր տնտեսական քաղաքականության կապակցությամբ, պետական ուսուցաների պակասության ու դրա հետեանքով լուսավորության հիմնարկների պահպանման գործի համար տեղական միջոցների ներգրավման անհրաժեշտության կապակցությամբ, լուսավորության աշխատողների մեջ, անկասկած, յե-

ըևան ե գալիս շփոթվածություն ու ձկտում՝
պահպանել լուսավորության հիմնարկները
կոմունիստական կուսակցության համար ա-
նընդունելի միջոցներով, ինչպես՝ վճար
մտցնելը ուսման համար, գրադարաններից,
ակումբներից ոգտվելու համար և այլն (ընդ-
գծումն իմն ե:—Ն. Կ.):

... Կենտրոնական կոմիտեն թիկ բոլոր
անդամների ուշադրությունն է հրավիրում
դպրոցների, գրադարանների և այլ հիմնարկ-
ների նյութական բարեկեցության պահպան-
ման այդպիսի պրիորների անթույլատրե-
լիության վրա:

... Անհրաժեշտ ե լուսավորության հիմ-
նարկները, մասնավորապես դպրոցները,
պաշտպանել մանր-բուրժուական տարերքից:
Անհրաժեշտ ե միջոցներ ձեռք առնել նրա հա-
մար, վորապեսզի մանկավարդը դպրոցի պահ-
պանման համար իր միջոցները մուծող հա-
րուստ քաղքենուց կախման մեջ չլինի: Ան-
հրաժեշտ ե պահպանել դպրոցի ու գրադարա-
նի անվճարության սկզբունքը (ընդգծումն
իմն ե:—Ն. Կ.)*:

ՀԱՏՎԱԾ՝ ՔԱՂԱՔԻ ՍՎԱՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ Բ
ՀԱՄԱԴՈՒՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՅԱՌԻՑ

... Այս գեռ քիչ ե, բավական չե անգրա-
դիտությունը վերացնելը, այլ պետք է նաև
խորհրդային տնտեսություն կառուցել, իսկ
այս գեպքում միայն գրադիտությամբ հեռու
չես գնա: Մեզ կուլտուրայի հսկայական
բարձրացում է պետք: Պետք ե, վոր մարդ ի-
րականում ողափի կարգալու և գրելու հըմ-
տությունից, վորպեսզի նա կարդալու բան
ունենա, վորպեսզի նա թերթեր ու պրոպա-
գանդիստական բրոշյուրներ ունենա, վոր-
պեսզի սրան նիշտ բաշխվեն ու հասնեն մա-
րդությն (ընդգծումն իմն ե:—Ն. Կ.), վոր-
պեսզի գրանք չկորչեն ճանապարհին, այն-
պես վոր գրանց կեսից ավելին չի կարդաց-
վում և ինչ-ինչ բանի համար գործադրում են
գրասենյակներում, իսկ շատ կարելի յէ, վոր
ժողովրդին նույնիսկ մի՛ քառորդն ել չի հաս-
նում: Պետք է սովորել ողափել այն քչից,
վոր մենք ունենք: (ՅԵՐԿԵՐ, XXII, հ., եջ
48):

Խ. Խ. ՍՏԵՓԱՆՈՎԻ ԳՐՔԻՆ ԿՅԱԾ ԱՌԱՋԱԲՍՆԻՑ
ՌԵՖՈՒԶ ԵԼԵԿՏՐՈՓԻԿԱԳԻԱՆ համաշխարհային
տնտեսության անցողիկ փուլի կապակցու-
թյամբ

... Խորհուրդների ութերորդ համագու-
մարը վորոշեց, վոր ելեկտրիֆիկացիայի պր-

*) „Справочник парт. работника“ II պրակ, 1922
թ., եջ 175: ԽՄԲ.

լանի դասավանդումը պարտապիր և ՌԽՖՍՀ
բոլոր—առանց բացառության բոլոր—ուսում-
նական հիմնարկներում։ Այս վորոշումը,
ինչպես և շատ ուրիշները, թղթի վրա մնաց
մեր (մեր, բոլցեկիմերիս) անկուլատուրակա-
նության հետեւանքով։ Այժմ, յերբ լույս է
տեսել ընկեր Մտեպանովի սույն «Զեռնարկ
գպրոցների համար», հարկավոր և հասնել,—
և մենք կհասնե՞նք,—այն բանին, վոր յուրա-
քանչյուր գավառական (ապա նաև յուրաքան-
չյուր վոլոստային) գրադարանում մի ֆանի
որինակ լինի այս «Զեռնարկից» (ընդգծումն
իմն է :—Ն. Կ.), — վորպեսզի Ռուսաստանի
յուրաքանչյուր ելեկտրակայանում (իսկ սր-
բանց թիվն 800-ից ավելի յե) վո՞չ միայն լի-
նի այս գիրքը, այլև անպայմանուրեն հանրա-
յին, ժողովրդական ընթերցումներ կազմա-
կերպվեն ելեկտրականության ու ՌԽՖՍՀ ե-
լեկտրոֆիկացիայի և ընդհանրապես տեխնի-
կայի մասին.— Վորպեսզի յուրաքանչյուր
գպրոցում ամեն մի ժողովրդական ուսուցիչ
կարդա և յուրացնի այս «Զեռնարկը» (այս
գործում նրան ոգնելու համար յուրաքանչյուր
գավառում պետք ե կազմակերպվի ինժեներ-
ների ու Փիզիկայի դասատուների խումբ կամ
խմբակ), և վո՞չ միայն կարդա, ըմբռնի և
յուրացնի ինքը, այլև կարողանա այս հաս-
կանալի ու պարզ կերպով վերապատճել դըպ-
րոցի աշակերտներին ու զյուղացի յերիտա-

ստրդությանն ընդհանրապես։ (Յերկեր,
XXVII հ., եջ 196)։

Ըսկեր ԿԱՐՊԻՑՍԿՈՒ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Վլադիմիր Իլյիչը, ինքնին հասկանալի
յե, դատապարտելի կամ իր արժանապատ-
վությունից ցած չեր համարում լինել Գ. Ա.
Կուկինի* անվան գրադարանի ամենից ճշ-
տապահ աբոնենտներից մեկը։ Նա ամբողջա-
պես խրախուսում ու գնահատում եր մեր
մտցրած «խիստ» կարգուկանոնը, վորն ապա-
հովում եր գրքերի ճիշտ շրջանառությունն ու
հազվագյուտ որինակների և արխիվային
նյութերի անվթարությունը։ Վլադիմիր Իլ-
յիչը վոչ մի գիրք կարդալով չեր փչացնում և
կարդալու համար միշտ վճարում եր ըստ տա-
րիքի։ Իհարկե, կուսակցական գրադարանը
թեպետ և գոյությունը պահում եր բացառա-
պես ընթերցողներից ստացած բաժնորդավը-
նարով, բայց անպայման կարող եր բացա-
ռություն անել կուսակցության ԱՕ-ի խրմ-

*) Ի նկատի ունի «Ճնճի ուսուական գրադարանը, գորը հիմնադրել է ՌՄԴԲԿ անդամ Գ. Ա. Կուկինը և վորն այդ գրադարանը կտակեց կուսակցությանը։ Գրադարանը հանրամատչելի յեր։ Գործել ե նա 1902 թ. ընդհուպ մինչև 1917 թ.։ 1907 թ. Գ. Ա. Կուկինի մահից հետո գրադարանն անհերթափոխ կեր-
պով վարում եյին Վ. Կարպինակին և Ս. Ռավիչը։ Ն. Կ.

բագրի համար: Բայց Վլատիմիլ Իլյիչին այդ
թվում եր անձնական «արտօնություն»: Գրա-
դարանավարական իմ պրակտիկայում այդ
միակ, բոլորովին բացառիկ դեղեն ե յեղել,
յերբ ստիպված եմ յեղել արոնենախն համո-
վել՝ վոչ թե այն, զոր նա պետք ե վճարի
կարդալու համար, այլ այն, զոր նա չպետք ե
վճարի: Սակայն դրանում համոզել Վլադի-
միր Իլյիչին՝ անհնար եր: Նա փող ունի—ու-
րեմն պարտավոր ե վճարել, ել վոչ մի խոսք:
Միակ բանը, զորին վերջ ի վերջո Վլադիմիր
Իլյիչը համաձայնվեց, կամ ավելի ճիշտ,
զորի հետ նա հաշտվեց—այդ այն եր, զոր
գրադարանը նրան չեր սահմանափակում
վերցրած գրքերի քանակությամբ ու կարդա-
լու ժամկետներով:

(„Զանկներ և աշխատանքներ Հայոց ազգական գործակույթի մասին պահանջման մասին առաջարկություն” հ. II, էջ 97)

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԽՆԾՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԵՎՈՐ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՅՔ*)

Լենինը հոկտեմբերն նշանակություն եր
առաջի գրադարանային գործի լավ գրված-
քին: կուլտուրական Փրոնտի այլ տեղամա-
քին բացառիկ մեծ ուշադրություն եր նվի-
րում: Այդ ժամին պերճախոս ձևով վկայում

*) «Պրագլա» № 276, 1933 թ.:

և «Ինչ է առել ու գրել լենինը գրադարաննե-
րի մասին» գրքույկը, վորտեղ հավաքված են
նրա մի շարք նամակները, հոդվածները, ճա-
ռերը, կարգադրություններն ու իր միջոցով
տնօցկացրած գեկրետները: Նրանցից յերեսում
է, թե ինչպիսի ուշադրությամբ նա հետեւում
էր գրադարանային գործի գրվածքին, ինչ-
պես կոնկրետ էյին նրա ցուցումները: Քաղա-
քացիական կոփվների տարիներին ու Նեպի
տարիներին գրադարանային Փրոնտում ըս-
տեղծված է յեղել վո՛չ քիչ արժեքավոր բան,
սակայն վո՛չ պակաս չափով արժեքավոր ձեռ-
նարկումներ խափանվել են քաղաքացիական
կոխվների շատ ծանր կացության ու տեղե-
րում «տնահաշվարկը» հաճախ սիսակ հասկա-
նալու հետեւանքով:

Խորհուրդների յերկրում այնպես կառուցել
գրադարանային գործը, վոր տարբեր տիպի
գրադարանների խիտ ցանցը ժամանակին
սպասարկի ամբողջ ժողովրդին գլխովին՝
նրան պետք յեկող գրքով, բավարարի մաս-
սայի՝ գիտելիքների հարածուն պահանջը,
ընացնելու նրանց հորիզոնը, պատասխանի
նրանց հարցերին,—այսպես եր լենինի պատ-
զամը:

Լուսժողկոմատում այժմ կազմակերպվում
է հատուկ գրադարանային վարչություն, վո-
րը պետք ե այդ գործը դնի պատշաճ բարձ-
րության վրա:

Առաջին անհետաձգելի ինդիրը—այդ՝
արդեն գոյություն ունեցող գրադարանները
համապատասխան շենքերով ապահովելն է:
Անհրաժեշտ է, վոր գրադարանների շենքերը
լինեն ազատ, լուսավոր, չոր, լավ ապահովեն,
վոր գրադարաններին կից լինեն հարմար
ժամանակաշրջաններ:

Նույնպիսի հոգածարություն, վորպիսին
մենք տեսնում ենք այժմ դպրոցական շենքե-
րի նկատմամբ, պետք է ցուցաբերել և՛ գրա-
դարանային շենքերի նկատմամբ: Պետք է աշ-
խատենք—հասնենք այս բանին: Պետք է մի-
անգամից ընդմիշտ վերջ սատ իրերի այն դր-
բությանը, յերբ ժողկրթության բաժնի վա-
րիչը գրադարանի շենքը հատկացնում է ման-
կապարտեղին, դպրոցին, ուսանողական հսն-
րակացարանին, գրադարանը տեղափոխելով
այժելի նեղ, մութ, խոնավ, ընթերցողների
համար անհարմար շենքեր, կամ ուղղակի
զրքերը նետում է մի նկուղ, վորտեղ և նրանք
վոչչանում են: Ժողկրթության բաժինների
այդպիսի վարիչներին առանց հապաղելու
պետք է հանել պաշտոնից, հանձնել դատա-
խողությունը: Սակայն միայն ժողկրթության
բաժինը չե կարգադրողը: Մենք գիտենք վո՞չ
քիչ դեպքեր, յերբ ուայսորհուրդները գրադա-
րանային շենքերը վերցնում են բնակարաննե-
րի, առեւտրական հիմնարկների համար: Գրա-
դարանային վարչությունը այդ բանին պետք

Ե վերջ տա: Նրան ողնության պետք ե գան
դատախազությունը, ԲԳՏ-ն, խորհրդային
հասարակայնությունն ու առաջին հերթին
խորհուրդները և նրանց սելցիաները:
Մեր յերկիրը կուլտուրապես աճել է. ու-
յոններից շատերի այդպիսի վերաբերմուն-
քը դեպի գրադարաններն ու գրադարա-
նային ունեցվածքը, դեպի գրքային հան-
րային սեփականությունը — պետք է անար-
գանքի սյունին գամել:

Մեր գրադարանային ցանցը, հատկապես
գյուղում, շատ անբավարար է: Պետք ե կա-
ռուցել նոր գրադարաններ, բայց խելացիորեն
կառուցել: Ինչքան դեպքեր են նկատվել—շատ
մեծ միջոցներ են ծախսվում, բայց իդուր
աեղը, կամ մի նոր գրադարան են կառու-
ցում, մյուսի կողքին, միայն ավելի ճոխ
(հաճախ գերատեսչությունները «մըցում» են,
մեկը մյուսի մոտ մեծ դրադարաններ կառու-
ցելով), կամ կառուցում են մի այնպիսի տեղ,
վորտեղ ազգաբնակության համար հարմար
չե նրանից ոդտվել, կամ գրադարանների հա-
մար հարմարեցնում են հին զորանոցների սը-
րահները: Ստացվում են ցուրտ, խոնավ, ան-
պետք շենքեր: Այստեղ անհրաժեշտ են՝ պլա-
նայինություն, տեղական պայմանների հաշ-
վառում, վաղվա որվա հաշվառում:

Գերատեսչությունների և կազմակերպու-
թյունների միջև փոխհամաձայնեցում պետք է

լինի: Պետք է մշակել տիպական պայմանագրեր, վորոնք կողնելին, վոր յուրաքանչյուր դրագարան առավելագույն չափով ոգտադրժի:

Առանձնապես մեծ ուշադրություն պետք է դարձնել կոլտնտեսային գրադարանների տիպերի վրա, վորոնց գրադարանների կարեքն այնքան զգում են այժմ կոլտնտեսությունները: ՄՏԿ կից քաղը բաժիններն այստեղ չուտ բանում կարող են ոգնել:

Երջանտյին գրադարանները պետք է ողնեն խրճիթ-բնթերցարաններին, կոլտնտեսային ակումբների գրադարանները կոմպեկտապորելու գործին, պետք է հրահանդապորն այդ գրադարանների զեկավարներին, ողնեն նրանց գրադարաննային տեխնիկային տիրապետելու գործում, ողնեն դպրոցական գրադարաններին:

Գրադարանային տեխնիկայի հարցերից շատ բան է կախված—գրքերի պահպանումը, գրքոյին հարստության առավելագույն ողտագործումը, բնթերցողների հարցումների բավարարումը և մինչև իսկ գրադարանի քաղաքական գեմքը: Տարբեր տիպի գրադարանների համար տարբեր տեխնիկա յե հարկավոր: Կարեւոր է իմանալ ուզած գիրքը ունկամ անել, առաջ շարժել, կարեւոր է գիտենալ գրքի ըրջանառությունը մեծացնել, հրահանգավորումը կաղմակերպել և այլն և այլն:

Գրադարանային տեխնիկայի բնագավառում մեզ մոտ թագավորում է մեծ անտեղյակություն, վորը խանգարում է գործը ճիշտ դնելուն:

Տնտեսական ու կուլտուրական շինարարության արագ տեմպերը պահանջում են համեմատաբար կարճատև ժամկետներում մասնագիտական կաղը բեր պատրաստել: Նրանց, ինչպես և սոց շինարարության մյուս մասնակիցներին, շատ բան պետք է ինքնակայորեն սովորել: Նրանց գրքեր են պետք: Գիտական գրադարանները մեր պայմաններում ինչ-վեր ինչնապարիակ բան լինել չեն կարող, Վօրը մատչելի լինի միայն մարդկանց նեղ շրջանակին: Նրանք պետք ե ողնեն արդեն արդեն աշխատանքի անցուծ և նրա համար պատրաստվող մտահագիտական կաղը բերի գիտական վորակավորմանը:

Գիտական գրադարանները պետք է լայն բացենց իրենց գոներն այն մարդկանց առաջ, վորոնք լրջորեն ցանկանում են սովորել, խորացնել իրենց գիտելիքները: Անհրաժեշտ ե կշռադատել, թե ի՞նչպես պետք է անել այդ լավագույն ձեռով: Գրադարանային վարչությունների մեջ կմտնեն վո'չ միայն մտահագիտական, այլև գիտական գրադարանները:

Շատ կարեւոր ու մեծ հարցը—Գրադարաններին գրքեր մատակարարելու հարցն է: Ինչպե՞ս պետք է մատակարարել գրադարանները: Ինչո՞ւ սնել:

Գրքերը, ինչպես ասում են, ընդունակ են «քարոյապես հնանալու» (ստարεատե): Նրանք բարոյապես հնանում են հատկապես մեր բուռն թափով ընթացող կյանքի պայմաններում: Հին ցեղութային պայմաններում յեզուողույսն լեզվով գրած գրքերը, նախկին տիրող դաստիարագերի համար գրած լրերը, վորոնք վերաբերում են այդ դաստիարակերին հուզող հարցերին, յեթե անդամ նրանք զեղարվեստականորեն են գրվել, քիչ են հետաքրքրում ժամանակակից մասսայական ընթերցողին: Նա ծարավ է այնպիսի գրքերի, վորոնք մոտիկ են իրեն, վորոնք խոսում են նրան տվյալ վայրկյանում հուզող հարցերի մասին: Սոցիալիստական շինարարության հարվածայինին հին գրականությամբ չես կերպիրի: Յեկը գրադարանը, վորն ամեն ժամանակ չի համարվում նոր լույս տեսնող գրտկանությամբ, կորցնում է իր հետաքրքրությունն ընթերցողի համար, նա գաղարում գրադարան հաճախելուց, անտարբեր է դառնում գեղի գրադարանը:

Պետք է սերտ կապ ստեղծել մեր մասսայական գրադարանների ու մեր ժամանակակից գրողների միջև: Գրողը պետք է հաշվի առնի ընթերցողի պահանջները, գրադարանային ընթերցողի ձայնը պիտի լսվի նաև հըրատարակչական պլաններ կազմելու ժամանակ:

Սա հարցի մի մասն է: Մյուսը—մտակարարման տեխնիկան ե, քաջևման տեխնիկան: Ի՞նչ թագցնենք մեղքներս. մեր գիրք մատակարարող որդանները գրադարանների նկատմամբ ամենուր դատում են հին ձեռվ. «ինչ վոր մեզ պետք չե, քեզ ձեռք կտա, շը լսվը կթողնենք վաճառքի, իսկ ինչ վոր կրծնա, կսաղացնենք գրադարաններին: Մինչեռ գրքերի բաշխումը մեզ մոտ պետք է կատարվի սոցիալիստական ձեռվ, և լավ գրքով առօդին հերթին պետք է մատակարարենք կոլեկտիվ ոգտագործման որդաններին — գրադարաններին և վո'չ թե մասնավոր սպառողին: Շատ և շատ ուժեր պետք է ծախսել՝ գրքի մատակարարման գործում հաստատված տրադիցիաները ջախջախելու համար:

Այսուհետ գալիս է հաշվառման հարցը: Հաշվառումը գրադարանային Փրոնտում մեզ մոտ կազմում է չորս վոտով: Վերցնում ես վորեւե մարզի տվյալները — այսուղ հաշվի յեն առնված միայն քաղլուսվարական գրադարանները, մյուս մարզի տվյալներում՝ հաշվի յեն առնված միայն պրոֆմիութենական գրադարանները, յերրորդի տվյալներում պրոֆմիութենականները հաշվի չեն առնված: Բայց հաշվի յեն առնված խճճիթ-ընթերցարանների գրադարանները և այլն և այլն: Դրա փոխարեն յուրաքանչյուր գրադարանի հաշվառում իր մեջ ներառում է բազմաթիվ ցուցանիւ-

ներ, խլում ահագին ժամանակ։ Ստացվում
են անհսմեմատելի նյութեր, վորոնց դործ
դնել չի կարելի։ Բայ յերեւութին մնում է
մի խորհուրդ ունենալ ֆողտնտիաշվառման
կենտվարչության ու Պետպլանի հետ, վորն
ասի, թե ինչպես անցկացնել ամենից հիմ-
նական տվյալների հաշվառումը, — բայց
իսկական հաշվառում, առանց վորի բոլոր
ֆին-պլանային հարցերը կախված են մնում
ուժից, բոլոր հաշիվները կատարվում են
աշխատափով»։

Գրադարանը չի կարող աշխատել առանց
գրադարանավարի։ Գրադարանավարը գոր-
ծի հոգին ե։ Նրանից անշափ շատ բան է
կախված։ Նա պետք է լինի իր գործի հնատու-
զիաստը, իմանա աշխատել ընթերցողների
մասսայի հետ, աիրապեսի գրադարանային
աշխատանքի մեթոդներին, իմանա այդ մե-
տոդներով կազմակերպել գրադարանի վողջ
աշխատանքը։ Գրադարանավարը մեր խոր-
հրլուային գրադարաններում չի կարող լինել
գրքերի սոսկ տեխնիկական տվյալ, նա պետք
է տիբապեաի վոչ միայն գրքեր տալու, գը-
րանցելու տեխնիկային, կարողանա հաշվի
տանել բաժանորդների թիվը, թեև անպայ-
տան պիտի կարողանա անել և այլ։

Այդքանը կարենալն անհրաժեշտ է, սա-
կայն շատ հեռու յե գոհացուցիչ լինելուց։
Մեր խորհրդային մասսայական գրադարանը

չի կարող, չպետք է վերածվի բյուրոկրատա-
կան հիմնարկության։ Նա պետք է լինի կեն-
դանի, կուլտուրական կենտրոն խոկ այդ պա-
հանջում և գրադարանավարից ունենալ մաս-
սային մոտենալու, մասսայի հետ աշխատելու
հմտություն, իմանալ նրա պահանջները,
կարողանալ նրա հետաքրքրությունն ուղղել
գորշակի հունով, զարթեցնել ընթերցողի
ինքնազործունեցությունը, նրանց մեջ հրա-
հանգավորման մեծ աշխատանք տանել։ Խոր-
հրդային գրադարանավարը պետք է լինի
կրթված և քաղաքականակես կոփիած անձ-
նավորություն խորիրդային գրադարանավա-
րը — ացիալիստական շինարարության պա-
տասխանառու մասնակիցն ե։ Գյուղում նրա
զերը վոչ թե փոքր է, այլ ավելի մեծ, քան
քաղաքում։

Դրա համար ծայրահեղորեն կարեւոր է՝
գրադարանային աշխատողների խելամիտու-
րնարությունը, նրանց կանոնավոր պատրաս-
տումն ու վերսպարաստումը։ Բայ 1933 թ.
ավյաների գրադարանավարների 36 տոկոսը
չունի վոչ մի գրադարանային պատրաստա-
կանություն, 24 տոկոսն ունի յոթամյա-
կրթություն և կամ գրադարանային աշ-
խատանքի մեկ տարվա ստաժ, կամ կար-
ճատե դասընթացներում ստացած գրադա-
րանային պատրաստություն։ Այլ խոսքով
այժմյան գրադարանավարների 60 տոկոսն այս
գործի անպատճառ ոկտնակներն են։ պարզ ե-

հաեւայդ կազմի հսկայական հոսունությունը .
իւկ հոսունությունը գրադարանային . Փրոն-
տում նշանակում է՝ փաստորեն վատնել գրա-
դարանային ֆոնդերը, ընթեքողներին մո-
ռացնել տալ գրադարանները: Մնացած 40
տոկոսից 15 տոկոսը գրադարանավարներ են,
տոկոսից 15 տոկոսը գրադարանավարներ են,
գրադարանային տեխնիկումի (ստացիոնար
կամ հեռակա) կրթության ծավալով ու թերի
միջնակարգ կրթությամբ աշխատողներ—
յերկու տարուց վոչ պակաս պրակտիկ աշխա-
տանքի ստաժով:

Ինչպես տեսնում ենք, այս կարգին պատ-
կանողները ևս պատրաստակամությամբ շատ
թույլ են, և միայն մնացած 25% -ին կարելի
յե անվանել իսկական գրադարանավարներ:

Այսպիսով գրադարանային կառքերի
ֆրոնտում մենք ունենք կատարյալ նեղէվածք:
Այս մասին պետք ե ասել հրադարակորեն,
պետք ե բացառիկ ուշադրություն դարձնել
կադրերի պատրաստման վրա: Այդ այժմ ա-
մենից հարվածային խնդիրն է: Հսկայական
սխալ կիրար, գրադարանային վարչության
կազմակերպման առիթով, փակել մանկավար-
կագման ժամանակակից առողջություն
ժական տեխնիկումներին կից գոյություն
ունեցող գրադարանային բաժանմունքները,
կծկել և այն փոքր աշխատանքը, փորն այժմ
կա: Պետք ե ամենից առաջ ամրացնել այն,
կա: Պետք ե ամենից առաջ ամրացնել այն,
ինչ վոր կա, իսկ հետո գրադարանային վար-
ինչ վոր կա, իսկ հետո գրադարանային վար-
չությանը նյութական հնարավորություններ
տալ՝ հատուկ գրադարանային տեխնիկում-

ների անհրաժեշտ ցանց ծավալելու համար:

Սակայն գրադարանային աշխատողների
պատրաստման և վերապատրաստման գործը
հաջողություն կունենա միայն այն դեպքում,
յերբ բարելավվի գրադարանավարի թե՛ նյու-
րական, թե՛ բարյական դրությունը:

Այստեղ մեծ հոգատարություն ե հար-
կավոր գրադարանային վարչության և Ցեկ-
պրոսի կողմից:

Գրադարանավարին պետք ե չըջապատել
այնպիսի ուշադրությամբ ու հոգատարու-
թյամբ, ինչպիսի հոգատարություն ստեղծ-
վել ե ուսուցչի շուրջը: Լավագույն ուժերը
պետք ե իրենց մորիլիզացիայի յենթար-
կեն այդ Փրոնտի համար: Խզուր չե, վոր
Վաղիմիր իլլիչը, զեռ 1919 թ. Արտա-
պարոցական բաժնին ուղղած իր հատուկ նա-
մուկում գրել ե գրադարանային ֆրոնտում
սոցիալիստական մրցակցության կազմա-
կերպման անհրաժեշտության մասին: Սոց-
արցումը— լավագույն աշխատակիցներ առաջ
քաշելու ուղին ե, այդպիսիների աշխատանքը
գործնական ցուցադրանք դարձնելու ուղին ե
ցույց տալու, թե ի՞նչպես պետք ե գործը
հասցնել պատշաճ բարձրության: Ճիշտ դըր-
ված մրցակցությունը խանդակառության
կրակով վառում ե այն բնագավառի աշխա-
տողներին, վորտեղ նա կիրառվում ե:

Մի շարք պատճառներ, և՛ մեր անցյալ
անկուլտուրականությունը, և՛ գրադարանա-

յին գործի թույլ գըլածքը, և գլխավոր ու-
շաղըությունը սոցչինարարության բազա-
ստեղծելու վրա կենտրոնացնելու անհրա-
ժեշտությունը, - հասցըին այն բանին, վոր
գրադարանը դեռևս կենցալի մեջ չի մտել:
Այսպես ելինում, —կողքին հոյակապ հանրա-
մատչելի գրադարան կա, մարդիկ չփառեն
նրա գոյության մասին, իսկ յեթե գիտեն ել,
ապա նրանց գլուխը չի գալիս, վոր նրանից
կարելի յե ու պետք ե ոգտվել: Շատ աշխա-
տանք պետք ե կատարել մասսայական ըն-
թերցուղ ներգրավելու համար: Յուրաքան-
չյուր գրադարանում պետք ե աճեցնել ըն-
թերցողների ակտիվ, վորը շատ բան կարող
է անել գրադարանի աշխատանքը պատշաճ
բարձրության վրա դնելու համար:

Իլյիչը գտնում եր, վոր գրադարանային
գործում ես, ինչպես անգրագիտության վե-
րացման բնագավառում, կարեռ ե, վոր ի-
րենք մասսաները ձեռնամուխ լինեն այդ գոր-
ծին: Նրանց պետք ե միայն սիստեմատիկա-
բար հրահանգավորել գրադարանային շինա-
րարության հերթական խոդիրների մասին:

ԽՍՀՄ-ում գոյություն ունեն դժվարու-
թյունները վերացնելու փորձված ուղիներ:
Մենք կարողանում ենք ուժերը մորիլիզա-
ցիայի յենթարկել: Այժմ, յերբ կուսակցու-
թյան ուշադրությունը, խորհրդային իշխա-
նության ուշադրությունն ուղղվում ե գրա-
դարանային գործի վրա, մի րոպե անդամ չի

կարելի կասկածել, վոր գործն արագ առաջ
կդնա: Կողնեն խորհուրդներն ու նրանց սեկ-
ցիաները, կողնի մամուլը: Կոմյերիտմիու-
թյունն արդեն մոտենում է այդ գործին: Ան-
կասկած՝ կողնեն նաև ՄՏԿ-ների քաղբաժին-
ները, գրադարանների առթիվ քաղբաժին-
ներից արդեն նամակներ են գալիս: Կողնեն
ՑԵԿՊՐՈՍը, լուսաշխատողների վողջ մաս-
ուն, վորոնք հասկանում են գրադա-
րանների դերը սոցիալիզմի շինարարու-
թյան գործում, վորոնք կսովորեցնեն և
փոքրերին և հաստիկավորներին, թե ինչպես
այետք ե ոգտվել գրադարաններից: Կողնեն
բանվորական ակտիվը, կոլտնտեսային գաշ-
տերի հարվածայինները, գրողները, ՃՏԱ-ն,
Բուհական աշխատողները և ուսանողությու-
նը, կողնեն բոլոր խորհրդային որգանները:

Յեվ այն ժամանակ մեր Խորհուրդների
յերկիրը վոչ միայն գրագետ կդառնա, - նա
կդառնա կարդացող, վորն ոգտագործում է
գիտության բոլոր նվաճումները, - այն ամենը
ինչ վոր գարերով ձեռք ե բերել մարդկու-
թյունը, գիտությունների, տեխնիկայի, ար-
վեստի բնագավառում, ինչ վոր կրում ե իր
մեջ գիտելիքները գործնականում կիրառելու
վողջ փորձը: Մասսան կվարժվի իսկական
ձեռով սովորելուն: Գրադարանային գործի
դարպացումը կամ բապնդի դպրոցը, բազմա-
պատիկ կերպով կհեշտացնի նրա աշխա-
տանքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ն. Կրուպսկայա — 3-րդ հրատարակության առաջաբանը	3
Ն. Կրուպսկայա — 2-րդ հրատարակության առաջաբանը	5
Ն. Կրուպսկայա — Լենինի աշխատանքը գրադարաններում	11
Դ. Ի. Լենինը — Մ. Ֆ. Անդրեյևային	28
Դ. Ի. Լենին — Խնչ կարելի յե անել ժողովրդական կրթության համար	29
Դ. Ի. Լենին — Պետրովադի հանրային գրադարանի խնդիրների մասին	35
ԺԿՍ վորոշումը գրադարանային գործի դըրվածքի մասին	37
Ժողովրդական կոմիսարների Խորհրդի գեկրետում (21 հունիսի 1918թ.)	39
Ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումը (14 հունվարի 1919թ.)	40
Ժողովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումը (30 հունվարի 1919թ.)	41
Լենինի նամակը Լուսժողկոմատի Արտադպրոցական բաժնին	42

Պողոսյի ճառ արտադպրոցական կրթության Համապուտական կանոնադրության կամացական 1 համադպումարին	45
Ռեկրետ՝ ՌիժՄՀՀ-ի դրադպրանային գործի կենտրոնացման մասին	48
Հատված արտադրական պլոպագանդայի վերաբերյալ թեզիաներից	51
«Առաժողկոմատի կոմունիստ-աշխատողներին ուղղած՝ կենտկոմի գիրեկափներ»-ից	53
«Առաժողկոմատի աշխատանքների մասին» Հոդվածից	53
Նամակ ընկեր Լիտկենսին	59
«Տեղերի տնտեսական որգանների մասին» արտասահմած ճանած ճառից	60
ՁԿ(Բ)ԿԿ: Հրջաբերականից (16 նոյեմբերի 1921թ.)	63
ՁԿադարձ՝ քաղլուսվարների Համառուսական Առաջապումարում արտասահմած ճառից	66
Ի. Ի. Ստեպանովի դրքին կցած առաջաբանից	65
Ընկեր Կարպինսկու հիշողություններից Լենինի մասին	67
Ն. Կրուպսկայա — Սոցիալիստական շինարարության կարևորության կարևորագույնը	68



Գատ . խմբագիր՝ Յե . Անվեղիկյան
Լեղվական խմբագիր՝ Հար . Պետրոսյան
Տեխ . խմբագիր՝ Լ . Ոհանյան
Սրբազրիչ՝ Մ . Մարտիկյան

Գլավլիտի լիազոր՝ Վ . 2002 . Հրամա 4646 .
Գատվեր 577 . Տիրաժ 3000 .
Թուղթ 72X105 . Տպագր . 5 մամ .
Մել մամ . 25600 նշան .
Հանձնված ե արտադրության Ք Հուլիսի 1938 թ .
Ստորագրված ե տպագրելու 10 հոկտեմբերի 1938 թ .

Պետհամատի 1 տպարան , Յերևան , Լենինի հայտ

«Ազգային գրադարան



NL0130826

Գիմը 60 կայ.

Н. К. Крупская
Л Е Н И Н
О б и б л и о т е к а х

Гиз Арм. ССР, Ереван, 1938